



Կանանց
Աջակցման
Կենտրոն

Ընտանեկան բռնության
ապդեցությունը երեխաների
վրա Հայաստանում



Ընտանեկան բռնության ապդեցությունը երեխաների վրա Հայաստանում

Ամելիա Բարնս

Երեխաների պաշտպանության սոցիալական աշխատանքի
առաջատար մասնագետ, ՄԹ

Մարո Մաթոսյան

Գործադիր տնօրեն, Կանանց աջակցման կենտրոն,
Հայաստան


Երևան 2020

I. Ներածություն	●
II. Ընտանեկան բռնության ապդեցությունը երեխաների վրա	●
III. Ընտանեկան բռնությանն ու երեխաներին արձագանքման մոդելներ	●
IV. Ազգային քաղաքականությունն ու Հայաստանում գործող ծրագրերը	●
V. Առաջարկներ	●
VI. Եզրակացություն	●

Բովանդակություն

.7	Ներածություն .7
.15	Ա. Ինչ է ընտանեկան բռնությունը .16 Բ. Կանանց վերարտադրողական առողջություն և նախածննդյան ժամանակաշրջան .17 Գ. Մանուկներ, դպրոցական տարիքի երեխաներ և դեռահասներ .21 Դ. Ընտանեկան բռնությունը և ծնող լինելը .34 Ե. Ապդեցությունը հասուն տարիքում .41
.45	Ընտանեկան բռնության Մեծ Բրիտանիայի մոդելը .46 Ընտանեկան բռնության շվեդական մոդելը .57
.63	Ընտանեկան բռնության վերաբերյալ օրենսդրություն .64 Ընտանեկան բռնությունը և երեխաների պաշտպանության ծառայությունները .77
.85	Կրթություն և իրավեկվածության բարձրացում .87 Երեխաների պաշտպանություն և սոցիալական ծառայություններ .91 Աջակցություն տուժողներին/վոհերին .94 Օրենսդրական բարեփոխումներ .98 Արագ արձագանքման ծառայություններ .101 Դատական համակարգ .106
.111	Եզրակացություն .112
.114	Գրականության ցանկ .115

I. Ներածություն



Ներածություն

Ընտանեկան բռնության (ԸԲ) հարցում երեխաների փորձառությանն արդյունավետ արձագանքելը մեծ մարտահրավեր է ԸԲ վերապրածներին ու նրանց երեխաներին աջակցության ծառայություններ նախագծողների և իրականացնողների համար: Համաձայն ուսումնասիրությունների՝ ամբողջ աշխարհում կանանց առնվազն 60%-ն իրենց կյանքի ընթացքում ենթարկվել է ծեծի, սեռական կամ հոգեբանական բռնության (OSCE 2011): Ցավոք, այսպիսի բռնությունը հիմնականում արական սեռի զուգընկերոջ/ամուսնու կողմից է կատարվում. այդպիսով ընտանեկան բռնությունը անհերքելիորեն գենդերային խնդիր է: Ընտանեկան բռնությունը չի սահմանափակվում աշխարհագրությամբ, էթնիկ պատկանելությամբ, ռասայով, կարգավիճակով կամ իշխանությամբ և շարունակում է լինել չբացահայտված խնդիր, որի մասին քիչ թվով երկրներ, համայնքներ ու ընտանիքներ են բարձրաձայնում ու դիմագրավում դրան: Ընտանեկան բռնության խնդիրը հանրայնացնելը կարող է ամօթի ու ստիգմայի առիթ տալ: Դժբախտաբար, Հայաստանը բացառություն չէ. 2010-2020 (մինչև օրս) ժամանակահատվածում շուրջ **100** (բացահայտված դեպքեր) կանայք են սպանվել իրենց զուգընկերոջ/ամուսնու կամ ընտանիքի անդամների կողմից: Միայն 2019-ին, Հայաստանում ոստիկանությանը

զեկուցվել է **956** ընտանեկան բռնության դեպքերի մասին, իսկ հասարակական կազմակերպությունները թե՛ զծով ստացել են **4592** զանգ ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց կողմից, որոնք օգնություն, խորհուրդ և ապաստան են խնդրել (Coalition to Stop Violence against women, 2016): Այս թվերը զգալիորեն հեռու են իրականությունից, քանի որ շատ զոհեր վախենում, կաշկանդվում են ու չեն համարձակվում դիմել օգնության: Ընտանեկան բռնությունը որոշ համայնքներում այնքան խորը արմատներ ունի, որ զոհերը, բռնարարներն ու երեխաները իրենց փորձառությունը չեն որակում կամ ընկալում որպես ընտանեկան բռնություն, ինչը նույնպես խոչընդոտ է ստեղծում օգնության դիմելու հարցում:

Ամենամտահոգիչը ընտանեկան բռնության նկատմամբ Հայաստանի բնակչության վերաբերմունքն է: Հայաստանի բնակչության միայն **36.8%** է ընտանեկան բռնությունը հանցանք համարում: Հայաստանում 2016թ. ՄԱԲՀ-ի (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, UNFPA) կատարած հարցման արդյունքում պարզվել է, որ հարցվածների **76%**-ը կարծում է, որ կան դեպքեր, երբ կանայք արժանի են ծեծի ենթարկվելու. օրինակ, երբ անհավատարիմ են իրենց զուգընկերոջը/ամուսնուն:

Չնայած, որ Հայաստանը ստորագրել է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության

կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (որը հայտնի է որպես Ստամբուլյան կոնվենցիա), այն ուժի մեջ չի մտել, և ընտանեկան բռնությունը Հայաստանում որպես հանցանք չի դիտարկվում: Ներկայումս ընտանեկան բռնության զոհերը ապավինում են ՀԿ-ների աջակցությանը, ինչպես օրինակ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն: Կենտրոնը զոհերին առաջարկում է հոգեբանական և սոցիալական աջակցություն, իրավաբանական օգնություն, ինչպես նաև ապաստան կանանց և նրանց երեխաներին: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ կենտրոնը 10 ՀԿ-ների վերապատրաստել է որպես ընտանեկան բռնության հարցում աջակցման կենտրոններ Հայաստանի բոլոր մարզերի համար:

Չնայած, որ ընտանեկան բռնության ազդեցությունը կանանց վրա լավ փաստագրված է, քիչ ուշադրության է արժանացել դրա ազդեցությունը երեխաների վրա: Վերապահ գնահատումով **257 միլիոն** երեխա ընտանեկան բռնության միջավայրում է ապրում (UNICEF փաստաթուղթ): Շատերը պնդում են, որ երեխաները չեն ենթարկվում ընտանեկան բռնության, եթե դեպքի վայրում՝ նույն սենյակում չեն գտնվում կամ եթե քնած են: Ներկայումս ավելի հաճախ են հնչում այս դիրքորոշման փոփոխման կոչեր. երեխաները պարզապես ընտանեկան բռնության «ականատես» չեն, այլ իրենց բոլոր զգայարաններով ապրում են այդ ամենը (Holden, 2003):

Ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները հավասարապես տրավմայի են ենթարկվում, և դա տևական ազդեցություն է ունենում երեխայի զարգացման վրա: Իր նշանակալից «Տրավմա և վերականգնում» աշխատության մեջ Ջուդիթ Յերմանը գրում է. «Մեծահասակների կյանքում անընդհատ կրկնվող տրավման խաթարում է արդեն ձևավորված անհատականության կառուցվածքը, բայց մանուկ հասակում անընդհատ կրկնվող տրավման ձևավորում և խեղում է անհատականությունը: Բռնության միջավայրում հայտնված երեխան առերեսվում է ադապտացվելու սոսկալի խնդիրների: Նա ոչ վստահելի մարդկանց հանդեպ վստահություն, ոչ ապահով իրավիճակում ապահովություն, սարսափազդու կերպով անկանխատեսելի իրավիճակում վերահսկողություն, անօգնական իրավիճակում ուժ ու կորով գտնելու ու պահպանելու միջոցներ պետք է գտնի: Ի վիճակի չլինելով ինքն իրեն պաշտպանել կամ իր մասին հոգ տանել՝ երեխան պետք է լրացնի մեծահասակների խնամքի և պաշտպանության բացը իր տրամադրության տակ եղած միակ միջոցով՝ հոգեբանական պաշտպանության ոչ լիարժեք զարգացած համակարգով» (Herman, 1997, p.97):

Այս աշխատանքի նպատակն է խորապես ուսումնասիրել երեխայի սոցիալական, հուզական (Էմոցիոնալ) և վարքագծային ձևավորումը մի աշխարհում, որտեղ

նա տեսնում է, թե ինչպես է մայրը կամ հիմնական խնամակալը ֆիզիկական, սեռական և/կամ հուզական (Էմոցիոնալ) բռնության ենթարկվում:

Այս աշխատանքն ընդգծում է, որ երեխաներն իրավունք և կարիք ունեն ունենալու ապահով ու անվտանգ տուն, ինչպես նաև հոգատար ու սատարող ծնողներ, ովքեր սիրում ու պաշտպանում են իրենց: Երեխաներին անհրաժեշտ է ունենալ կանոնակարգված օր և կայունություն. նրանք պետք է իմանան, թե առօրյա կյանքում ինչ կարող են ակնկալել իրենց հիմնական խնամակալներից. Թե՛ վստահություն, որ ծնողները միշտ կգրկեն ու կհոգան իրենց մասին, երբ իրենք տխուր են, և թե՛, որ պատշաճ ու համարժեք կարծազանքեն իրենց «վատ» վարքագծին: Երեխաներն ապահովության ու պաշտպանվածության այս զգացողության կարիքն ունեն, որպեսզի երբ դրսի աշխարհում վախ կամ սպառնալիք են զգում, ունենան մի ապահով տեղ, որտեղ կարող են առանձնանալ ու իրենց խնամակալներից ջերմություն ու սփոփանք ստանալ:

Ցավոք, բռնության միջավայրում ապրող երեխաները զրկված են ապահով ու կայուն տուն ունենալու իրենց իրավունքից: Նրանք չգիտեն ամեն բոլոր ինչ ակնկալել իրենց հիմնական խնամակալներից. երբեմն ապրում են հանգիստ, ջերմ ու հոգատար միջավայրում, իսկ

երբեմն՝ վախի, քաոսի, աղաղակների, ճիչերի ու լացի միջավայրում: Անգամ այդ հանգիստ ու ջերմ պահերին, բռնության միջավայրում ապրող երեխաները չեն կարողանում հանգիստ լինել, քանի որ «սպասում» են բռնության հաջորդ դրվագին: Այս երեխաներն իրենց ինամակալներից աջակցություն են ակնկալում, բայց հաճախ քիչ ջերմություն ու սփոփանք են ստանում, քանի որ ծնողներին ավելի շատ մտահոգում է իրենց սեփական ֆիզիկական ու հուզական (Էմոցիոնալ) կարիքների բավարարումը բռնության դրվագից հետո:

Բռնության միջավայրում ապրող շատ երեխաներ, գրեթե աջակցություն չստանալով, լուռ տառապում են: Նրանք կարիք ունեն վստահելի մեծահասակների, որոնց կարող են դիմել, ինչպես նաև ծառայությունների, որոնք կօգնեն նրանց հաղթահարել իրենց վատ փորձառությունը: Ընտանեկան բռնության միջավայրի դատապարտված երեխաներ ունեցող ընտանիքների գործերին միջամտելու մասին որոշումները պետք է հիմնավորված լինեն երեխաների վրա բռնության ազդեցության՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ, խորը, բազմակողմանի ընկալմամբ:

Ընտանեկան բռնությունն ազդում է ոչ միայն կանանց վրա, այլ նաև խարխալում է ընտանիքի հիմքերը, ինչն իր անմիջական ազդեցությունն է ունենում երեխաների վրա, որոնք մեծանում են թունավոր

ընտանեկան միջավայրում: Շատ ավելին պետք է անել այս երեխաներին պաշտպանելու և, առաջին հերթին, բռնությունը կանխելու համար:

II. Ընտանեկան բռնության
ապդեցությունը
երեխաների վրա



II. Ընտանեկան բռնության ազդեցությունը երեխաների վրա

Ա. Ի՞նչ է ընտանեկան բռնությունը

«Ընտանեկան բռնությունը կամ զուգընկերոջ/ամուսնու կողմից բռնությունը հարձակողական և հարկադրական վարքագծի մոդել է, ներառյալ ֆիզիկական, սեռական և հոգեբանական հարձակումները, ինչպես նաև տնտեսական հարկադրանքը, որն օգտագործվում է մեծահասակների կամ դեռահասների կողմից իրենց ներկա կամ նախկին զուգընկերոջ հանդեպ: Ֆիզիկական բռնության օրինակ է ապտակը, ցնցումը, բռունցքով կամ ինչ-որ առարկայով հարվածելը, խեղդելը, այրելը, ոտքով հարվածելը և դանակով սպառնալը: Սեռական բռնությունը ներառում է սպառնալիքների, ահաբեկման կամ ֆիզիկական ուժի միջոցով հարկադրված սեռական հարաբերությունը, ոչ ցանկալի սեռական հարաբերություն և հարկադրելը, ուրիշների ներկայությամբ և ուրիշների հետ սեռական հարաբերություն հարկադրելը: Հոգեբանական բռնությունը ներառում է մեկուսացումը, չափից շատ խանդը, գործողությունների վերահսկումը, խոսքով ագրեսիան, ահաբեկումը գույքի ոչնչացման միջոցով, ոտնձգությունը կամ հետապնդումը, բռնության սպառնալիքները և շարունակական նվաստացումն ու նսեմացումը» (Ellsberg, 2005):

Ընտանեկան բռնությունը տարբերվում է բռնության այլ ձևերից, քանի որ բռնությունն իրականացվում է մեկի կողմից, որին զոհը սիրում ու վստահում է, և որն անընդհատ մոտ է գտնվում զոհին: Բռնի հարաբերությունները սովորաբար սկզբում երջանիկ ու առողջ են լինում: Այնուհետև բռնարարն աստիճանաբար սկսում է ուժ ու վերահսկողություն կիրառել, ինչը մեկուսացնում է զոհին և կախվածության ուժեղ զգացողություն է առաջացնում: Կախվածության այս վիճակն ու սերը բռնարարի հանդեպ զոհի համար չափազանց դժվարացնում են հեռանալն ու իրենց ու իրենց երեխաներին պաշտպանելը: Այդ ժամանակ հնարավոր է, որ բռնարարը շարունակի բռնությունը, որը կարող է ավելի սրվել և լուրջ վնաս հասցնել զոհին և անգամ մահվան պատճառ դառնալ:

Բ. Կանանց վերարտադրողական առողջություն և նախաձննդյան ժամանակաշրջան

Երեխաների վրա ընտանեկան բռնության ազդեցությունն սկսվում է նախքան հղիությունը և շարունակվում է նախաձննդյան ընթացքում: Ընտանեկան բռնության շատ զոհեր նշում են հղիությունից առաջ հակաբեղմնավորման վերահսկման ինչ-որ ձևի մասին, ինչպես օրինակ՝ պահպանակներից հրաժարվելը, հղիություն հարկադրելը, հակաբեղմնավորիչների սաքոտաժ և հղիության հարկադրված ընդհատում: Արդյունքում շատ կանայք չեն ունենում այն թվով երեխաներ, որքան ցանկանում

Են կամ իրենք չեն որոշում ծննդաբերությունների միջև իրենց նախընտրած միջակայքը: Շատ կանայք պահպանակ օգտագործելու ցանկություն են ունենում, բայց չեն կարողանում բարձրաձայնել սրա մասին իրենց զուգընկերոջ մոտ կամ բռնարարի կողմից ուղղակիորեն մերժվում են: Սա Հայաստանում սեռական ճանապարհով փոխանցվող վարակների բարձր ցուցանիշի պատճառներից մեկն է (Կանանց աջակցման կենտրոնի փաստաթուղթ): Հղիանալուց հետո նույնպես որոշ կանանց իրենց զուգընկերները կամ ընտանիքի անդամները ստիպում են հղիությունն ընդհատել, այդ թվում՝ պտղի սեռով պայմանավորված, ինչը մեծ ռիսկ է պարունակում (Կանանց աջակցման կենտրոնի փաստաթուղթ): Սա սեռային հարաբերակցության լուրջ անհավասարակշռության պատճառներից մեկն է, քանի որ շատ ավելի քիչ թվով աղջիկներ են ծնվում քան տղաներ, և սա հանգեցրել է նրան, որ Հայաստանում արձանագրվել է աշխարհում ճանաչված անհավասարակշռության ամենաբարձր ցուցանիշներից մեկը (UNFPA 2013):

Բեղմնավորումից հետո, սովորաբար ընտանեկան բռնարարը զուգընկերոջը թույլ չի տալիս բժշկական խնամքի դիմել մինչև հղիության ուշ շրջան. սա շատ վտանգավոր է և կարող է հանգեցնել մոր, պտղի և նորածնի առողջության հետ կապված բազմատեսակ բարդությունների (Կանանց աջակցման կենտրոնի փաստաթուղթ): Փորձը ցույց է տվել, որ Հայաստանում սկեսուրները կարող են

հղիության ընթացքում բռնի վերաբերմունք ցուցաբերել կանանց նկատմամբ. որոշ հղի կանայք ստիպված են ծանր աշխատանք կատարել և զրկված են պատշաճ մնունդից ու բժշկական խնամքից՝ ամուսնու ընտանիքի անդամների անտարբերության հետևանքով (Կանանց աջակցման կենտրոնի փաստաթուղթ): Սա նույնպես կարող է չափազանց վտանգավոր լինել, քանի որ հղիության բարդությունները կարող են չհայտնաբերվել և դրա արդյունքում պտուղը կարող է ճիշտ չգարգանալ:

Աստիճանաբար ավելի լայն տարածում է ստանում այն փաստը, որ հղիության ժամանակ կանանց հանդեպ բռնության ռիսկը բարձր է: Ըստ ուսումնասիրությունների՝ բռնության ենթարկված կանանց մոտ 30%-ը առաջին անգամ բռնության է ենթարկվել հղիության ընթացքում, իսկ երբևէ բռնության ենթարկված կանանց մինչև 44%-ը նորից է բռնության ենթարկվել հղիության ընթացքում: Դեպքերի 90%-ի պարագայում այս բռնությունն իրականացվում է դեռ չծնված երեխայի հոր կողմից (British Medical Association): Հայաստանում նույնպես Կանանց աջակցման կենտրոնների շահառուների ճնշող մեծամասնությունը հաստատում է, որ իրենք ֆիզիկական բռնության են ենթարկվել հղիության ընթացքում: Շատ զույգերի համար հղիության շրջանը կարող է սթրեսային ժամանակաշրջան լինել, բայց որոշ տղամարդիկ էլ ավելի խանդոտ ու վերահսկող են դառնում, երբ իրենց զուգընկերը հղիանում է. հնարավոր է, որ նրանց դուր չի գալիս, որ իրենց զուգընկերոջ

ուշադրությունն իրենցից շեղվում է դեռ չծնված երեխայի կարիքների ուղղությամբ, և դրա արդյունքում նրանք դառնում են բռնի: Հղիության ժամանակ բռնության հատկապես վտանգավոր տեսակ է այն, երբ բռնարարը թիրախավորում է հատկապես կնոջ որովայնը (UNICEF փաստաթուղթ):

Հղիության ընթացքում բռնության ամկայությունը կապակցված է մայրական մահացության, պտղի մահացության, նախածննդյան արյունահոսության, պտղի ոսկրային կոտրվածքների, պտղի ինֆեկցիաների, մայրական ինֆեկցիաների, պտղաթաղանթի վաղաժամ պատռման և հղիության (գեստացիոն) հիպերտոնիայի հետ: Հավելյալ ռիսկ և բարդություններ կան նաև այն կանանց համար, ովքեր սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ են ձեռք բերել իրենց զուգընկերոջ՝ պաշտպանիչ միջոցների օգտագործելուց հրաժարվելու (օրինակ պահպանակներ) հետևանքով: Պարզվել է նաև, որ այն կանանց մոտ, ովքեր ենթարկվել են զուգընկերոջ/ամուսնու կողմից բռնության որևէ ձևի, պտուղը կորցնելու որևէ տեսակի (վիժում կամ մեռելածնություն) ռիսկը 50%-ով ավելի բարձր է, քան այն կանանց մոտ, որոնք բռնության չեն ենթարկվել (Liu et al, 2016): Խորությամբ ուսումնասիրված է նաև բռնության կապը վաղաժամ ծննդաբերության, ինչպես նաև նորածնի թերթաշղթայի հետ:

Հղիության ժամանակ բռնությունը կարող է նաև զգալիորեն ազդել կնոջ հոգեկան առողջության վրա. բռնի վերաբերմունքի ենթարկված հղի կանանց մոտ հաճախ հանդիպում է դեպրեսիա, անհանգստություն և ինքնասպանության մասին մտքեր: Սա նույնպես կարող է բացասական ազդեցություն ունենալ պտղի վրա, քանի որ մայրը դժվարանում է կապ ստեղծել իր դեռ չծնված երեխայի հետ: Ուսումնասիրությունների համաձայն՝ բռնության ենթարկված կանանց մոտ հետծննդյան դեպրեսիա ունենալու հավանականությունը 50%-ով ավելի բարձր է քան բռնության չենթարկված կանանց մոտ. սա իր հերթին ազդում է երեխաների համար՝ նրանց կարիքներին համահունչ ու հոգատար խնամակալ լինելու մայրերի կարողության վրա և կարող է հանգեցնել մոր ու երեխայի միջև ոչ պատշաճ կապվածության (Garebedian et al, 2008):

Գ. Մանուկներ, դպրոցահասակ երեխաներ և դեռահասներ

Ըստ հետազոտությունների տարբեր տարիքի երեխաների վրա ընտանեկան բռնության ազդեցությունը միանշանակ դրական կամ բացասական չէ, սակայն ուսումնասիրությունները փաստում են, որ երեխաների տարբեր տարիքային խմբերի մոտ այն տարբեր կերպ է դրսևորվում (RIP փաստաթուղթ): Ենթադրվում է նաև, որ ամենայն հավանականությամբ, ազդեցությունը ավելի մեծ կարող է լինել այն երեխաների մոտ, ովքեր

պարբերաբար ընտանեկան բռնության են ականատես լինում. համարվում է, որ երեխաները չեն ընտելանում ընտանեկան բռնությանը:

Մանուկներ

Յետազոտությունները ցույց են տվել, որ մանուկների ու նախադպրոցական տարիքի երեխաների պարագայում ընտանեկան բռնությունը կարող է վնասել երեխայի ուղեղի զարգացմանը և սա կարող է խաթարել կոգնիտիվ (իմացական) և հուզական (եմոցիոնալ) աճը (Perry, 2001): Այս խաթարումը կարող է դրսևորվել մի շարք ձևերով, այդ թվում՝ ուշ խոսելը, զուգարան գնալուն վարժվելու հետ կապված բարդությունները, վատ զարգացած շարժողականությունը և էմպատիայի (ապրումակցության) ու հուզական (եմոցիոնալ) արձագանքի զարգացման հապաղումը: Այս տարիքի երեխաների մոտ կարող է լինել քնի խանգարում, հուզական (եմոցիոնալ) անհանգստություն և մենակ մնալու կամ իրենց ինամակալներից բաժանվելու խորը վախ (Osofsky, 2003; Lundy and Grossman, 2005):

Լայնորեն ընդունված է, որ հիմնական ինամակալի (սովորաբար մոր) և երեխայի միջև վաղ կապվածությունը առանցքային է երեխայի առողջ զարգացման համար (Prior & Glaser, 2006): Ավելի հավանական է, որ մանկահասակ երեխայի մոտ ամուր կապվածություն ստեղծվի այն

դեպքում, երբ մայրը կարողանում է նրբազգացություն ցուցաբերել ու արձագանքել երեխայի կարիքներին և նրա համար ապահով ու հուսալի հանգրվան ապահովել: Մայրը խրախուսում և աջակցում է երեխային ռիսկի դիմելով սովորել և ուսումնասիրել շրջապատը, բայց երբ երեխան ապահովության ու սփոփանքի կարիք ունի, նորից նրան գրկաբաց ընդունում է նրա համար ապահով հանգրվանում: Դժբախտաբար, ընտանեկան բռնության առկայության պարագայում ոչ միշտ է հնարավոր, որ մոր ու երեխայի միջև ամուր կապ ստեղծվի. ընտանեկան բռնությունը կարող է համարվել ուղղակի վտանգ մոր ու երեխայի հարաբերության համար (Humphreys, 2007):

Երբեմն ընտանեկան բռնության զոհերը ի վիճակի չեն լինում իրենց երեխային սփոփանք ու վստահություն տալ և սա կարող է հանգեցնել խուսափողական վարքի. երեխան կարող է ցուցաբերել ծայրաստիճան վիատվածություն և փորձել ինքն իրեն հանգստացնել՝ ձգտելով էլ ավելի չվրդովել կամ չգրգռել ինամակալներին: Մյուս կողմից բռնության զոհը կարող է անկանխատեսելի կերպով արձագանքել երեխայի ազդանշաններին և կարող է գերակայել հակասական կապվածությունը. երեխան կարող է անհանգիստ ու գրգռված լինել և զգվանքի կարիք ունենալ, բայց մայրը հոժարակամ չի սփոփում նրան: Առավել մտահոգիչ է, երբ առաջանում է անկազմակերպ/անկանոն կապվածություն: Այս իրավիճակում երեխան մորն ընկալում է որպես և՛ սփոփանքի, և՛ վախի աղբյուր:

Ընտանեկան բռնության ենթարկված մայրերը հաճախ խիստ վախեցած են լինում, և երեխան կարող է այս վախը ընկալել որպես ուղղակի սպառնալիք: Այդ դեպքում երեխան դժվարանում է հասկանալ, որ իր ապահովության ենթադրյալ աղբյուրը նաև վախի աղբյուր է. դրանից հետո երեխան խնամակալի հանդեպ ցուցաբերում է մտերմության և խուսափողական վարքագծերի անհամաչափ խառնուրդ: Սա չափազանց մտահոգիչ է, քանի որ անկազմակերպ/անկանոն կապվածությամբ երեխաների մոտ կյանքի հետագա փուլերում մտավոր առողջական խնդիրներ ունենալու մեծ հավանականություն կա (Liotti, 2005):

Մայրերը, որոնք ծննդաբերել են ամուսնական բռնաբարության կամ ոչ ցանկալի հղիության արդյունքում, հնարավոր է դժվարությամբ կապվածություն և նվիրվածություն ունենան իրենց երեխայի հետ: Բեղմնավորումից հետո հնարավոր է, որ մայրը դժվարությամբ համակերպվի հղիության հետ և կարող է զգվել իր մարմնից ու իր դեռ չծնված երեխայից: Ծննդաբերությունն ինքնին կարող է սթրեսային լինել մոր համար, քանի որ հնարավոր է հիշողության առկայծումներ (ֆլեշբեք) լինեն, որոնք կարող են նորից տրավմայի պատճառ դառնալ: Ծննդաբերությունից հետո սովորաբար զոհը սիրո և ատելության հակասական զգացողություններ է ունենում, ինչը կարող է հանգեցնել նրան, որ մայրն անընդհատ տատանվի՝ մեկ ընդունելով երեխային, մեկ

մերժելով (Tyano, 2010): Այս մայրերը պետք է փորձեն հոգ տանել երեխայի մասին՝ միևնույն ժամանակ փորձելով ապաքինվել բռնության հետ կապված տրավմայից: Չնարավոր է, որ առաջանան վախի, զայրույթի ու ամոթի զգացողություններ: Երեխային նայելը կարող է ցավոտ լինել այս մայրերի համար, քանի որ երեխան կարող է մորը հիշեցնել բռնարարի մասին և նա կարող է երեխային դիտարկել որպես պատիժ ու չարիք: Մայրը կարող է փորձել վանել երեխային և նրա համար երեխային դիպչելը կամ երեխայի հիմնական կարիքները հոգալը կարող է չափազանց տառապալի լինել: Այսպիսի դեպքերում, երբ բռնությունից առաջացող ցավը, ամոթն ու վախը շարունակում են մոր համար չհաղթահարված մնալ, հնարավոր է, որ մոր ու երեխայի միջև անկազմակերպ/անկանոն կապվածություն առաջանա: Բռնաբարության արդյունքում ծնված երեխաները կարող են վախի զգացողություն առաջացնել իրենց մայրերի մոտ, ինչն էլ հետագայում երեխան մեկնաբանում է որպես ուղղակի սպառնալիք իր անվտանգությանը. այս երեխաների մոտ զարգանում են հաղթահարման մեխանիզմներ՝ սառեցում կամ քարացում (երբ երեխան չի արձագանքում) կամ գերզգոնություն, վախը կամ ոչ ցանկալի լինելու զգացումը հաղթահարելու համար: Որոշ դեպքերում բռնաբարության զոհերի մոտ կարող է ցանկություն լինել, որ իրենք ու իրենց երեխաները մահանան. որոշ մայրեր ցանկանում են հրաժարվել իրենց երեխաներից, ոմանք հնարավոր է փորձեն սպանել

իրենց երեխաներին՝ որպես իրենց տառապանքներին վերջ դնելու միջոց: Հավանականությունը մեծ է, որ ոչ ցանկալի կամ բռնաբարության հետևանքով ծնված երեխաները մեծ տարիքում կամերեսվեն ստիգմայի, մերժման կամ բռնության ու հոգեբանական ճնշման ընտանիքի անդամների և հեռավոր ազգականների կողմից: Այս ստիգման կարող է տարածվել հասարակության ավելի լայն շրջանակներում՝ հանգեցնելով նրան, որ այս երեխաները խնդիրներ ունենան կրթության, սննդի և առողջապահության հասանելիության հարցում:

Հայաստանում Կանանց աջակցման կենտրոնի ապաստաններում աշխատակիցները ականատես են եղել որոշ դեպքերի, երբ մայրերը ոչ մի կապվածություն, նվիրվածություն կամ հետաքրքրություն չեն ունեցել իրենց երեխաների բարեկեցության հանդեպ: Հոգեբանների և սոցիալական աշխատողների հետ երկարատև խորհրդատվական հանդիպումների ընթացքում զբաղվել են այս վարքագծով և հասել դրական արդյունքների:

Դպրոցահասակ երեխաներ

Պարզվել է, որ ընտանեկան բռնության միջավայրում ապրած դպրոցահասակ երեխաների մոտ վարքագծային խանգարումներ զարգանալու հավանականությունն ավելի մեծ է: Այս երեխաները կարող են դրսևորել ագրեսիվ վարքագիծ, չենթարկվել սահմանափակումներին և տարեկիցների հետ առողջ հարաբերություններ ձևավորելու

հարցում դժվարություններ ունենալ (Baldry, 2003): Ծնված օրվանից սկսված զարգացման հապաղումները կարող են շարունակվել մինչև վաղ մանկություն. այս հապաղումները կարող են իրենց մեջ ներառել մղձավանջների պատճառով գիշերային անմիզապահությունը, խոսքի խանգարումները, օրինակ՝ կակազելը, հուզական (եմոցիոնալ) արձագանքի և էմպատիայի (ապրումակցության) հետ կապված դժվարությունները:

Այս երեխաները դպրոցում կարող են գերակտիվության և կենտրոնացման հետ կապված խնդիրներ ունենալ, և մեծ է հավանականությունը, որ ուսումնական պրոցեսում թերացումներ կունենան: Մյուս կողմից, ընտանեկան բռնության մթնոլորտում ապրող երեխաները կարող են դառնալ շատ լուռ ու ինքնամփոփ. Կարող են իրենց հեռու պահել ընտանիքից, հասակակիցներից, հրաժարվել կրթությունից, ինչն էլ նրանց չափազանց խոցելի է դարձնում սոցիալական մեկուսացման առումով: Որոշ երեխաներ կարող են դժվարությամբ ընկերներ ձեռք բերել այն պատճառով, որ չեն հասկանում, թե ինչ է իրենցից ակնկալվում և քանի որ չգիտեն ինչպես վարվել ուրիշ երեխաների հետ: Դպրոց հաճախելը նույնպես կարող է խնդիր լինել, քանի որ որոշ երեխաներ հրաժարվում են դպրոց գնալ՝ վախենալով, որ իրենց բացակայության ընթացքում տանը ինչ-որ բան կարող է տեղի ունենալ: Երբեմն երեխաներին թվում է, որ իրենց ներկայությունը կարող է հանգստացնել բռնարարին և կանխարգելել

բռնության հետագա միջադեպերը: Որոշ երեխաներ կարող են տնային աշխատանքը կատարելու հետ կապված խնդիրներ ունենալ, քանի որ չեն կարողացել քնել բռնության միջադեպի պատճառով կամ այն պատճառով, որ վախեցել են, որ կարող է այդպիսի միջադեպ տեղի ունենալ: Կրթությունից հետ մնալով՝ այս երեխաները կորցնում են սովորելու ու զարգանալու արժեքավոր հնարավորություններ, ինչը խանգարում է մեծանալուն զուգընթաց ակտիվ կերպով հասարակական կյանքին նրանց ներգրավվելուն:

Շատ երեխաներ իրենց մեղավոր են զգում ընտանիքում կատարվող բռնության համար: Երեխաներին կարող է թվալ, թե իրենք են բռնության պատճառը. կարող են իրենք իրենց ստիպել լավ վարքագիծ դրսևորել և ենթադրել, որ իրենց վատ պահվածքը կամ իրենց ներկայությամբ պայմանավորված սթրեսն է ընտանիքում կոնֆլիկտի պատճառ դառնում: Տանը եղած ժամանակ ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները վնասվելու ռիսկի են ենթարկվում, հատկապես եթե փորձում են միջամտել ու պաշտպանել իրենց խնամակալներին, կամ եթե միջադեպի պահին խնամակալի գրկում են: Հաճախ երեխան փորձում է կանգնել ծնողների արանքում և ֆիզիկական արգելք դառնալ՝ հուսալով, որ կկանխի հոր հարձակումը: Ցավոք սա կարող է հանգեցնել երեխայի լուրջ ֆիզիկական վնասվածքների. ծայրահեղ զայրույթի պահին բռնարարը հաճախ ի վիճակի չէ վերահսկել

իրավիճակը և հարձակվում է և՛ մոր, և՛ երեխայի վրա: Այսպիսի իրավիճակներում երեխաները կարող են զայրույթով լցվել ծնողների նկատմամբ, քանի որ ստիպված են տանը իրենց վրա վերցնել մեծահասակի պարտականություններ և քանի որ ստիպված են պաշտպանել իրենք իրենց, իրենց մորն ու քույր-եղբայրներին: Անգամ հանդարտ ժամանակ երեխաները բռնության սպասման մեջ են և այս լարվածությունը կարող է զգալիորեն ազդել նրանց հուզական (եմոցիոնալ) բարեկեցության վրա: Նրանք կարող են զգալ, որ անընդհատ զգոն ու գերլարված են, քանի որ ցանկանում են կանխել միջադեպի՝ վերահսկողությունից դուրս գալը: Սա ընդգծված է Կանանց աջակցման կենտրոնի շահառուի ստորև ներկայացված վկայության մեջ.

«Մշտապես եզրագծին: Երբեք ազատ չես, երբեք ապահով չես: Այնպիսի զգացողություն էր, կարծես անվտանգ տեղ չկա... Տանը լինելն ընդհանրապես ապահով չէր. պարզապես մի վայրում ես, որտեղ անընդհատ զգոն ես: Հանգիստ չես քնում, պարզապես նստում ու սպասում ես, որ մի բան պատահի: Չէի կարողանում քնել կամ տնային աշխատանքներս անել, այդ պատճառով ստիպված էի բացակայել դասերից ու ատում էի այդ ամենը: Մինչև կոկորդոս կուշտ էի այդ ամենից»
(Քնարիկ, 15տ., Կանանց աջակցման կենտրոնի շահառու):

Սովորաբար ընտանիքները թաքցնում են այն ինչ կատարվում է տանը ընկերների, ընտանիքի և հասարակության ավելի լայն շերտերի կողմից ստիգմայի, ամոթի

կամ քննադատության վախերի պատճառով: Հնարավոր է, որ որոշ երեխաների ծնողները սպառնալիքի տակ ստիպեն լուռ մնալ և չխոսել այն մասին, թե տանն ինչ է կատարվում: Սրա արդյունքում երեխաները կարող են մեկուսացած ու միայնակ զգալ, և հնարավոր է, որ սա էլ ավելի կնպաստի վախի ու անհանգստության աճին:

Դեռահասներ

Դեռահաս տարիքում երեխայի վարքագծային խնամքի կարիքները կարող են ավելի արտահայտված դառնալ: Ընտանեկան բռնության միջավայրում ապրող դեռահասների մոտ հոգեկան առողջության խնդիրների հավանականությունն ավելի մեծ է, ինչպես օրինակ՝ դեպրեսիա, տագնապ կամ հետտրավմատիկ սթրեսային խանգարում: Բռնության ու ճնշված մթնոլորտում ապրող դեռահասների մոտ հաճախ նկատվում են վախի, տխրության, միայնության ու հուսահատության զգացողություններ: Տարածված են նաև ինքնասպանության մասին մտքերն ու մտադրությունները (Song et al, 1998): Որոշ դեռահասներ կարող են ավելի բռնի ու ագրեսիվ դառնալ տարիքի հետ, և այդ գայրույթը կարող է ուղղվել իրենց ծնողների կամ այլ հասակակիցների դեմ: Նկատվել է նաև, որ ընտանեկան բռնության մթնոլորտում ապրող շատ երեխաներ տնից դուրս են ապաստան և պատկանելության զգացում փնտրում. սա նրանց խոցելի է դարձնում քրեական և սեռական շահագործման տեսանկյունից:

Իրենց սեփական կարիքներով մտահոգված և կայունություն ու անվտանգություն ապահովելու անկարող ծնողերի հետ դեռահասները ավելի խոցելի են դառնում հանցավոր խմբավորումների ազդեցության տակ ընկնելու տեսանկյունից: Այս հանցավոր խմբավորումները կարող են տալ մի բան, ինչը չի կարող տալ երեխայի ընտանիքը՝ հուսալիություն, կայունություն, հետևողականություն, նվիրվածություն և նպատակասլացության ու պատկանելության զգացողություն: Փոխարենը՝ երեխաներին կարող են ստիպել թմրանյութեր վաճառել, զենք կրել կամ հարկադրաբար սեռական հարաբերություններ ունենալ: Ենթադրություններ կան նաև, որ ընտանեկան բռնության ենթարկված երեխաները այնուհետև նաև դեռահաս տարիքում են բռնության ու հոգեբանական ճնշման ենթարկվում իրենց ինտիմ հարաբերությունների մեջ (Barter, 2009): Այս բռնությունը կարող է լինել ֆիզիկական, սեռական և հուզական (եմոցիոնալ): Դեռահասների ինտիմ հարաբերություններում առկա բռնությունը հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրների, դեպրեսիայի և ինքնասպանության (Collin-Vézina et al, 2006):

Ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաները մշտապես սպառնալիք են զգում և չեն կարողանում ապավինել ծնողներին՝ ջերմ, հոգատար ու հանգիստ ընտանեկան մթնոլորտ ունենալու հարցում: Ուժեղ սթրեսային միջավայրում մեծանալը հանգեցնում է նրան, որ երեխաների մոտ մշտապես ակտիվ է *պայթարիր*

կամ փախիր համակարգը: Այս հակազդեցությունը ֆիզիոլոգիական արձագանք է, որի ժամանակ մարմնի նյարդային համակարգն ակտիվանում է հորմոնների հանկարծակի արտազատման հետևանքով: Նյարդային համակարգը խթանում է, որ մակերիկամները ադրենալին արտազատեն, ինչը հանգեցնում է մարդու սրտխփոցի հաճախացմանը, արյան ճնշման բարձրացմանն ու շնչառության արագացմանը: Սա միանգամայն բնական արձագանք է վախեցնող կամ սպառնացող իրավիճակի բախվելու պարագայում. օրգանիզմը պետք է որոշի կռվել սպառնալիքի դեմ, թե՛ ինքն իրեն տարանջատի իրավիճակից:

Երկար ժամանակ ուժեղ սթրեսի ենթարկված երեխաների ու դեռահասների (ինչպես օրինակ ընտանեկան բռնության պարագայում) մոտ օրգանիզմի *պայթարիր կամ փախիր* արձագանքը վտանգին ու սպառնալիքին դառնում է գերզգոն, և սա նշանակում է, որ կարող է կորտիզոլ արտազատվել անգամ եթե վտանգ չկա: Հորմոնների այս շարունակական արտազատումը կարող է հանգեցնել ուղեղի անդամալի փոփոխությունների, և այս փուլում կարող ենք նկատել տրավմայի հետևանքները:

Փոքր երեխաների մոտ կարող են դրսևորվել զարգացման հապաղումներ, որոնք դեռահաս տարիքում կարող են արտահայտվել հակադրվող վարքագծի կամ ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման դեմ պայթարի տեսքով:

Մեծանալուն զուգընթաց այս դեռահասները կարող են վատ միջանձնային հարաբերությունների, ուրիշներին չվստահելու, հարաբերություններ պահպանելու և հոգեկան առողջության խնդիրներ ունենալ: Գրականության մեջ ավելի հաճախ է հանդիպում այն տեսակետը, որ ընտանեկան բռնության և երեխաների ֆիզիկական առողջության մեջ ուղղակի կապ կա. ընտանեկան բռնության մթնոլորտում ապրող երեխաների մոտ ավելի մեծ է ասթմայի, ալերգիայի, ՈՒՊԳՅ-ի (ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ) և նմանատիպ այլ հիվանդությունների առաջացման հավանականությունը (Graham-Bermann and Seng, 2005):

Կարևոր է նշել, որ ֆիզիկական, հուզական (եմոցիոնալ) խանգարումներ կամ ուսումնառության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաները (թե՛ մանուկները, թե՛ դպրոցահասակ երեխաները, թե՛ դեռահասները) հատկապես խոցելի են ընտանեկան բռնության ազդեցության նկատմամբ: Այս երեխաները կարող են ունենալ հաղորդակցման խնդիրներ և հնարավոր է ի վիճակի չլինեն խոսել իրենց ապրումների մասին: Սրա հետևանքով այս երեխաները հակված են մեկուսանալու, քանի որ մասնագետներն ավելի շատ կենտրոնանում են ծնողների կարիքների վրա, քան երեխայի:

Ավելին, հասնելով դեռահաս տարիքի, աղջիկները հաճախ իրենց բռնարար հոր կամ մոր զուգընկերոջ/

ամուսնու կողմից սեռական ոտնձգությունների հետ են բախվում: Աղջիկ երեխաների հանդեպ սեռական ոտնձգությունը չափազանց կործանարար է, և երբեմն մայրերը, վրեժխնդրությունից վախենալով, երեխային պաշտպանելու փոխարեն, քողարկում են բռնարար զուգընկերոջ/ամուսնու արարքը: Այնուամենայնիվ, լինում են նաև դեպքեր, երբ դեռահասների վրա հարձակումները կարող են որոշիչ դառնալ, որ մայրը հեռանա բռնարար զուգընկերոջից/ամուսնուց:

Դ. Ընտանեկան բռնությունը և ծնող լինելը

Ընտանեկան բռնությունը կարող է լուրջ ազդեցություն ունենալ մոր՝ երեխաներին խնամելու կարողության վրա: Հաճախ շատ կանայք իրենց մեջ են պահում իրենց զուգընկերոջ նվաստացուցիչ ու ստորացնող խոսքերը: Բռնարար զուգընկերոջ/ամուսնինը կարող է մորը իր երեխաների ներկայությամբ ստորացնել և ասել, որ նա անարժան է, անպետք կամ հիմար՝ այսպիսով հանգեցնելով նրան, որ մայրը կորցնում է վստահությունը որպես ծնող իր ունակությունների հանդեպ: Բռնարար տղամարդիկ կարող են փորձել խարխլել մայր-երեխա հարաբերությունը՝ երեխայի հետ մոր դեմ միավորվելով կամ խրախուսելով, որ երեխան վիճարկի մոր հեղինակությունը (Bancroft and Silverman, 2002): Այս պահվածքով բռնարարը թիրախավորում է կնոջ ինքնության զգացողությունն ու նրա մայր լինելու դերը: Հուզական (Էմոցիոնալ) բռնության այս ձևը կարող է խորապես վնասել երեխաներին, քանի

որ նրանք դժվարանում են հասկանալ, թե որ ծնողի հետ պետք է հոգեպես կապված ու նվիրված լինել: Այս բռնությունը կարող է հանգեցնել մոր՝ իր ծնողական պարտականությունների նկատմամբ անտարբերության և երեխայի նկատմամբ մայրական ջերմության ու հոգատարության նվազման. այսպիսի վարքագիծը կարող է ազդել մայր-երեխա կապվածության վրա և այդպիսով, երեխան իրեն չսիրված, անապահով ու մերժված է զգում (Kelleher et al, 2008b):

Մայրական զգացմունքների վրա կարող է ազդել նաև սպասվող բռնության տագնապը, երբ մայրը մշտապես հարձակման ենթարկվելու վախի մեջ է ապրում. մայրը կարող է այնքան ջանալ հանգստացնել իր բռնարար զուգընկերոջը/ամուսնուն, որ արդյունքում երեխայի կարիքները երկրորդական դառնան (տես Humphreys et al 2006a): Այսպիսի դեպքերում մայրը դիտավորություն չունի անտեսելու երեխայի կարիքները. տրավման այնքան ուժեղ է, որ նա ի վիճակի չէ հոգ տանել իր երեխաների մասին: Դժբախտաբար այս անտեսումը հաճախ սխալ է հասկացվում մասնագետների կողմից (այդ թվում ոստիկանության և սոցիալական աշխատողների), և հայրը ի նպաստ իրեն է օգտագործում իրավիճակը՝ մասնագետներին հորդորելով իրեն հանձնել երեխայի խնամակալությունը: Այսպիսի դեպքերում մայրը լիովին ի վիճակի է հոգ տանել երեխայի մասին, բայց աջակցության կարիք ունի խորը ֆիզիկական ու հուզական (Էմոցիոնալ)

տրավման հաղթահարելու համար, որպեսզի կարողանա կենտրոնանալ երեխայի կարիքների վրա:

Ապացուցվել է, որ ընդհանուր առմամբ ընտանեկան բռնությունը միշտ զգալի ազդեցություն է ունեցել զոհերի հոգեբանական գործընթացների վրա: Ընտանեկան բռնության ենթարկված շատ կանայք ուժեղ տրավմայի են ենթարկված և հավանականությունը մեծ է, որ նրանք հոգեկան առողջության խնդիրներ կունենան, ինչպես օրինակ՝ դեպրեսիա, տագնապ կամ հետտրավմատիկ սթրեսային խանգարում (Herman, 1997): Այս մայրերի մոտ կարող են լինել մղձավանջներ, սևեռուն մտքեր, անքնություն, էմոցիոնալ օտարվածություն և ինքնասպանության մասին մտքեր: Անխուսափելի է այն, որ այսպիսի խնդիրներ ունեցող մայրերը իրենց երեխաների մասին հոգալու ավելի քիչ ժամանակ ունեն, քանի որ հավանաբար ստիպված են իրենց հուզական (էմոցիոնալ) կարիքներին առաջնահերթություն տալ: Այս մայրերը կարող են դժվարությամբ ջերմություն ու գուրգուրանք ցուցաբերել իրենց երեխաների նկատմամբ, ինչպես նաև կարող են դժվարանալ դրական ու հետևողական դաստիարակության մեթոդներ կիրառել: Չնարավոր է, որ նրանք թմրանյութեր ու ալկոհոլ օգտագործեն՝ փորձելով հաղթահարել առօրյա բռնության տառապանքը: Որոշ դեպքերում բռնարարը կարող է զոհին ստիպել թմրանյութեր օգտագործել՝ փորձելով վերահսկել նրան կամ իրեն վերապահել երեխաների ինսամակալությունը:

Չնարավոր է նաև, որ մայրը, լինելով թմրանյութերի ազդեցության տակ, կորցնի վերահսկողությունն ու բռնի վարքագիծ դրսևորի երեխաների նկատմամբ՝ չափազանց վախեցած լինելու և ծայրահեղ հուզական (էմոցիոնալ) սթրեսի հետևանքով: Այս խնդիրը ստորև ներկայացված է Կանանց աջակցման կենտրոնի սոցիալական աշխատակցի կողմից.

«Չայաստանում մայրերի մեծամասնությունը ֆիզիկական պատիժը համարում է երեխաներին դաստիարակելու մեթոդ: Սա ավելի ակնհայտ է այն կանանց մոտ, որոնք գալիս են մեր ապաստաններ. հաճախ երեխաներին ապտակում կամ ծեծում են անգամ առանց պատճառաբանության: Թվում է, թե մայրը կարծում է, որ իր իշխանությունը ցույց տալու կամ իր հուսահատությունը թափելու միակ թիրախը երեխան է: Սոցիալական աշխատողից երկար ժամանակ է պահանջվում այս իրավիճակը շտկելու համար: Մենք կանոնավոր կերպով ապաստանում գտնվող մայրերին ծնող լինելու հմտություններ ենք սովորեցնում» (Կանանց աջակցման կենտրոնի սոցիալական աշխատակից):

Լինում են դեպքեր, երբ ականատես ենք լինում, թե ինչպես են հատկապես դեռահաս աղջիկները որոշումներ կայացնում իրենց մայրերի փոխարեն, որոնք տրավմայի ազդեցության պատճառով ի վիճակի չեն ինքնարտահայտվել, որոշումներ կայացնել կամ անգամ

ամենահասարակ առօրյա տնային գործեր անել, ինչպես օրինակ՝ ճաշ պատրաստել, քանի որ ցրված են ու չեն կարողանում կենտրոնանալ: Երեխաները հաճախ ստիպված են հոգ տանել ծնողի կամ փոքր բույրերի ու եղբայրների մասին:

Սերտ կապ կա նաև ընտանեկան բռնության և բռնարարների կողմից երեխաների նկատմամբ կիրառվող ավտորիտար դաստիարակության ձևերի մեջ: Բռնարար տղամարդիկ կարող են կոշտ լինել դաստիարակության հարցում և կարող են պահանջել, որ երեխան հոգա հոր կարիքները, և ոչ թե հակառակը: Տարածված է պատժելու վարքագիծը և ոչ այնքան հաճախ դրական տրամադրվածությամբ վերաբերմունքը ծնողի կողմից, և ենթադրվում է, որ որոշ բռնարար հայրեր կարող են ոչ բավարար ներգրավված լինել իրենց երեխաների դաստիարակության մեջ կամ անտարբեր լինել նրանց հանդեպ: (Bancroft and Silverman 2002) Կան հիմքեր ենթադրելու համար, որ տանը ընտանեկան բռնության ենթարկված երեխաների մոտ հետագայում ֆիզիկական, հուզական (Էմոցիոնալ) և սեռական բռնության ենթարկվելու հավանականությունը 40%-ով ավելի մեծ է (World Health Organization, 2002): Այսպիսի իրավիճակներում, երբ երեխան ընտանեկան բռնությանը զուգահեռ ուղղակիորեն բռնության է ենթարկվում, ենթադրվում է, որ բռնության այս երկու ձևերը լուրջ ու բազմաշերտ ազդեցություն են ունենում երեխայի հոգեկան ու հուզական (Էմոցիոնալ)

բարեկեցության վրա (Herrenkohl et al, 2008): Բռնարար հայրերի մոտ նաև մեծ է թմրանյութերի ու ալկոհոլի չարաշահման հավանականությունը. հարբած վիճակում հավանականությունն ավելի մեծ է, որ նրանք կորցնեն վերահսկողությունն ու մոր կամ երեխայի հանդեպ բռնություն կիրառեն: Փաստերը վկայում են, որ ընտանեկան բռնության ու ալկոհոլի առկայության պարագայում, հավանականությունը մեծ է, որ բռնությունն ավելի հաճախակի լինի, իսկ պատճառած վնասներն՝ ավելի լուրջ (Leonard, 2001):

Ապացուցվել է, որ ընտանեկան բռնության շատ զոհեր սոցիալական աջակցություն չեն ստանում, քանի որ հաճախ բռնարարները փորձում են զուգընկերոջը մեկուսացնել իրենց շրջապատից: Ընտանիքից ու ընկերներից մեկուսացումը, դուրս գալու և ուրիշների հետ ժամանակ անցկացնելու սահմանափակումները կարող են էլ ավելի ազդել ընտանեկան բռնության զոհերի հոգեկան վիճակի վրա (Graham-Berrman, 2001): Այն կանայք, ովքեր փորձում են հեռանալ իրենց բռնարար զուգընկերոջից/ամուսնուց, կարող են տպավորություն ունենալ, որ արդեն վտարված են իրենց սեփական ընտանիքներից, շրջապատից, ընկերներից և բռնությունից փախչելու տեղ չունեն. այս ամենից զոհը կարող է չափազանց միայնակ զգալ և հոգեկան առողջության խնդիրները կարող են էլ ավելի սրվել: Դժբախտաբար, ընտանեկան բռնությունը ոչ միշտ է դադարում, երբ կինը հեռանում է բռնարար

զուգընկերոջից/ամուսնուց, և շատ երեխաներ, բաժանումից հետո շփման պայմաններում, բախվում են ընտանեկան բռնության հետ: Շատ երեխաներ շարունակում են շփվել (կամ ապրել) իրենց բռնարար հոր հետ, և սա կարող է երեխայի մոտ շփոթություն ու զայրույթ առաջացնել. մի կողմից նրանք կապված են հոր հետ՝ որպես հիմնական խնամակալներից մեկը, մյուս կողմից՝ վախենում են ու դատապարտում հոր բռնությունը (Peled, 2000): Ցավոք հայրերը հաճախ երեխային հարցաքննում են մոր ապրելու վայրի ու պայմանների մասին՝ նպատակ ունենալով գտնել զոհին և շարունակել բռնություն կիրառել: Որոշ դեպքերում երեխաներին խրախուսում են մորը սպառնացող ու վիրավորող խոսքեր փոխանցել, կամ անգամ ներգրավվել մորը սպանելու իրենց պլաններում (Humphreys and Thiara, 2003):

Ե. Ազդեցությունը հասուն տարիքում

Միակ և լավագույն հիմքը կանխատեսելու, թե արդյոք երեխան մեծանալով կդառնա բռնարար կամ ընտանեկան բռնության զոհ այն է, թե նա մանուկ հասակում ընտանեկան բռնության ենթարկվել է, թե ոչ (UNICEF փաստաթուղթ): Տանը բռնության ականատես եղած երեխաները սովորում են, որ բռնության միջոցով կարելի է փորձել միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտներ լուծել: Երեխաները աշխարհին ծանոթանում են իրենց հիմնական խնամակալների միջոցով: Երբ տեսնում են, թե ինչպես է իրենց հիմնական խնամակալը հոգեբանական, սեռական


և/կամ ֆիզիկական բռնություն կիրառում կամ դրա զոհը դառնում, կարծում են, որ դա նորմա է: Դեռահաս, իսկ հետո հասուն տարիքում նրանք կարող են դժվարություններ ունենալ հասակակիցների հետ, ինչպես նաև անձնական ու ռոմանտիկ առողջ հարաբերություններ ձևավորելու հարցում: Հասուն տարիքում այս կանայք կարող են կարծել, որ զուգընկերոջ/ամուսնու կողմից բռնությունը, ծեծը, վերահսկողությունը և սեռական հարաբերություններ պարտադրելը ընդունելի են, և հազիվ թե վիճարկեն զուգընկերոջ վարքագիծը կամ դիմեն աջակցության: Այս տղամարդիկ նույնպես կարող են կարծել, որ իրենց զուգընկերոջը բռնության ենթարկելը, ծեծելը, վերահսկելն ու սեռական հարաբերություններ պարտադրելն ընդունելի է, քանի որ նրանց կարծիքով սա նորմալ վարվելաձև է կնոջ հետ: Այս անհատներն այնուհետև երեխաներ կունենան, որոնք անխուսափելիորեն ընտանեկան բռնության ականատես կդառնան ու կենթարկվեն բռնության. այսպիսով, բռնության ցիկլը սերնդեսերունդ շարունակվում է (Whitfield et al, 2003):

Ապացուցվել է նաև, որ մանուկ հասակում ընտանեկան բռնության ենթարկված մարդկանց մոտ հասուն տարիքում հոգեկան առողջության խնդիրներ ունենալու հավանականությունն ավելի մեծ է (Howells and Rosenbaum, 2008): Այս խնդիրներից կարող են լինել դեպրեսիան, տագնապը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումն ու անհատականության խանգարումը: Տրավման այն բանից,

որ սիրելի անձնավորությունը ենթարկվում է հուզական (Էմոցիոնալ), սեռական և ֆիզիկական բռնության, կարող է խորը ցնցում առաջացնել. առանց պատշաճ աջակցության ու խորհրդատվության զոհերի համար կարող է դժվար լինել հասկանալ ու «մարսել» իրավիճակը:

Անհատականության խանգարումները համարվում են մանկության տրավմայի (ինչպես օրինակ ընտանեկան բռնությունը) երկարատև կամ հաճախակի ազդեցության հետևանք (ԸԲ վիճակագրություն): Այս խանգարման հետևանքով մարդն իր մտքերը, զգացմունքները և Էմոցիաները կարգավորելու խնդիրներ է ունենում, և այն կարող է հանգեցնել դատարկության, ամոթի ու մեղավորության սևեռուն զգացողությունների: Սահմանային անհատականության խանգարումով ախտորոշվածների շուրջ 75%-ը կյանքի որևէ շրջանում ինքնասպանության փորձ է կատարում: Այս ախտորոշմամբ մարդիկ դժվարանում են իրենց երեխաների համար հստակ սահմաններ գծել ու արդյունավետ դաստիարակություն ապահովել: Անհատականության խանգարում ունեցող մայրերի երեխաների համար դժվար է իրենց Էմոցիաները ճանաչել ու կառավարել, ինչը նրանց հասուն տարիքում խոցելի է դարձնում անհատականության խանգարում ձեռք բերելու նկատմամբ:

III. Ընտանեկան բռնությանն ու երեխաներին արձագանքման մոդելներ



III. Ընտանեկան բռնությանն ու երեխաներին արձագանքման մոդելներ

Երկար տարիներ աջակցությունն առաջարկվում էր միայն բռնության զոհ դարձած կանանց: Վերջին տարիներին պարզ է դարձել, որ ընտանեկան բռնությունը հավասարապես ազդում ու տրավմայի է ենթարկում երեխաներին: Ավելին, մայրերի բարեկեցությունն ու վերականգնումը սերտորեն կապված է երեխաների բարեկեցության ու անվտանգության հետ: Աշխարհի տարբեր երկրներում կիրառվում են մի շարք տարբեր մոդելներ, որոնք մշակվել են ընտանեկան բռնության զոհերին ու նրանց երեխաներին աջակցելու համար: Դրանցից երկուսը ներկայացված են ստորև: Չնայած այս մոդելները կատարյալ չեն, բայց մեծ նշանակություն ունեն ընտանեկան բռնության զոհերի ու բռնության միջավայրում ապրող երեխաների պաշտպանության հարցում և կարևոր հենասյուն են հանդիսանում Զայաստանի ներկայիս համակարգը բարելավելու ուղղությամբ մտածելու համար:

Ընտանեկան բռնության Մեծ Բրիտանիայի մոդելը

Մեծ Բրիտանիայում մի շարք գործակալություններ համագործակցում են ընտանեկան բռնության զոհերին ու բռնության միջավայրում ապրող երեխաներին

պաշտպանելու համար: Արտակարգ իրավիճակներում զոհերը կարող են ուստիկանություն զանգել ու անմիջապես արձագանք կստանան. ուստիկանությունը ժամանում է դեպքի վայր ու հաստատում մորն ու երեխային սպառնացող վտանգը: Ուստիկանությունն ունի անհրաժեշտ պատրաստվածություն, կարող է գնահատել ռիսկը երեխայի համար և անհրաժեշտության դեպքում դիմել երեխաների սոցիալական խնամքի կենտրոն, որպեսզի նրանք գնահատեն ռիսկի աստիճանը: Երեխաների սոցիալական խնամքը ֆինանսավորվում է պետության կողմից, գործի են դրվում սոցիալական աշխատողներ երկրի ողջ տարածքով մեկ, որոնք կարիք ունեցող ընտանիքների ռիսկը գնահատելու ու նրանց աջակցելու համար անհաժեշտ պատրաստվածություն ունեն: Ծայրահեղ իրավիճակներում, երբ ուստիկանությունը համարում է, որ երեխան անմիջական վտանգի տակ է, կարող է ուստիկանական խնամքի տակ վերցնել երեխային և տանել տնից, մինչև որոշում կայացվի երեխային պետության խնամքին հանձնելու մասին: Անհրաժեշտության դեպքում, ուստիկանությունը կարող է ձերբակալել բռնարարին կամ 48 ժամով շփվել արգելող կարգադրություն կիրառել, ինչը թույլ չի տալիս, որ բռնարարը կապ հաստատի զոհի հետ: Այնուհետև ուստիկանությունը կարող է դիմել դատարանին այս հրահանգը 28 օրով երկարացնելու հայցով: Զրահանգի որևէ խախտման շատ լուրջ են վերաբերվում,

բռնարարը կարող է խստորեն դատապարտվել, եթե խախտի ոստիկանական պաշտպանության հրահանգի պայմանները: Այնուհետև ոստիկանությունը զոհին կուղղորդի ընտանեկան բռնության հարցերով զբաղվող անկախ փաստաբանի մոտ, որը զոհին ուղղություն կտա ու կաջակցի: Փաստաբանը կարող է օգնել անվտանգության, իրավիճակից դուրս գալու պլանավորման հարցում, կարող է օգնել նաև զոհին դիմել դատարան՝ ավելի երկարատև պաշտպանություն ստանալու համար: Եթե զոհը անհարմար է զգում ոստիկանություն զանգահարել, կարող է զանգահարել ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային թեժ գիծ, որը կարող է նրան ու նրա երեխաներին ուղղորդել ապաստան և օգնել խորհրդով ու առաջնորդել:

Ինչպես շատ երկրներում, կա բրիտանական օրենսդրության երկու տեսակ. քրեական օրենսդրություն և քաղաքացիական օրենսդրություն: Ընտանեկան բռնության հանցանքները հետապնդվում են քրեական օրենսդրության շրջանակներում. բռնության լուրջ դեպքերի պարագայում դատախազությունը կարող է քրեական գործ հարուցել՝ անկախ նրանից զոհը ցանկանում է հայց ներկայացնել դատարան, թե ոչ: Քաղաքացիական օրենսդրությունը կարելի է բաժանել ընտանիքի մասին օրենսդրության և երկու մասնավոր կողմերի միջև վեճերի լուծմանը վերաբերող օրենսդրության: Քաղաքացիական

օրենսդրությունը կարգավորում է ամուսնալուծությունը, զբաղվածությունը, անփութությունը: Քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվում են նաև ընտանեկան հարցերը. այնուամենայնիվ, այս հարցերը քննվում են ընտանեկան գործերի դատարաններում: Ընտանեկան գործերով զբաղվող դատարանը կարող է լուծել խնամակալության վերաբերյալ վեճերը և կարգավորել հարցերը, երբ սոցիալական հարցերով զբաղվող մարմինները դիմում են դատարան՝ ներկայացնելով անվտանգության ու պաշտպանության համար երեխային ընտանիքից հեռացնելու հայց: Պաշտպանության կարգադրությունների տեսանկյունից քրեական վարույթների շրջանակներում կարող են տրվել շփումը արգելող կարգադրություններ, իսկ քաղաքացիական վարույթների շրջանակներում՝ չհետամտելու կարգադրություններ: Այս երկու հրամանները նման են նրանով, որ ապահովում են զոհի զգալի պաշտպանություն և կարող են ներառել նաև երեխաներին:

Եթե զոհը ցանկանում է քրեական գործ հարուցել բռնարարի դեմ, դատական ծախսերը հոգում են վճարված հարկերից (իրավաբանական օգնության համար հատկացված միջոցներով), զոհը գործընթացի ողջ ընթացքում լիարժեք աջակցություն է ստանում փաստաբանի ու իրավաբանի կողմից: Եթե զոհը ցանկանում է պաշտպանություն ստանալու համար (իր

ու իր երեխաների համար) դիմել ընտանեկան հարցերով զբաղվող դատարան, այդ ծախսերը նույնպես հոգում են իրավաբանական օգնության համար հատկացված միջոցներով: Մեծ Բրիտանիայում գործում է նաև համակարգ, ըստ որի հասարակության անդամները, որոնք մտավախություն ունեն, որ իրենց զուգընկերը հնարավոր է նախկինում կանանց նկատմամբ բռնություն է գործադրել, կարող են դիմել Ընտանեկան բռնության բացահայտման ծառայություն (հայտնի որպես Զլերի օրենք (Clare’s law)): Այնուհետև ոստիկանությունը հայտ ներկայացնողին ծանուցում է, թե արդյոք իր զուգընկերը երբևէ ձեռքակալված կամ ընտանեկան բռնության միջադեպի մեջ ներգրավված եղել է, թե ոչ: Սա շատ արդյունավետ միջոց է՝ կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու և բռնարարի շարունակական իրավախախտման շղթան քանդելու համար:

Բռնության միջին կամ բարձր ռիսկայնության դեպքերում Մեծ Բրիտանիայում երեխաների աջակցման ծառայությունները նախաձեռնում են ընտանիքի գնահատում՝ երեխային սպառնացող առկա ռիսկերը պարզելու համար: Բոլոր սոցիալական աշխատողները ընտանեկան բռնության գոհերի հետ աշխատելու վերապատրաստում են անցնում իրենց բակալավրի կամ մագիստրոսական կրթության շրջանակներում: սոցիալական աշխատողները նաև պետք է պարբերաբար թարմացնեն ու կատարելագործեն այս ոլորտում

իրենց գիտելիքներն ու մոտեցման ձևերը: Սոցիալական աշխատողների կողմից իրականացվող գնահատումները սեղմ ժամանակացույց ունեն և սովորաբար պետք է կատարվեն 8 շաբաթվա ընթացքում: Գնահատումից հետո սոցիալական աշխատողները ընտանիքին աջակցություն են առաջարկում, որպեսզի փորձեն նվազագույնի հասցնել երեխային սպառնացող ռիսկը և բռնարարին խրախուսեն դիմել աջակցության՝ վարքագիծը փոխելու համար: Չոհին նույնպես աջակցություն է առաջարկվում խորհրդատվության և խմբային աշխատանքի միջոցով՝ օգնելու համար, որ զոհը իմանա ընտանեկան բռնության դինամիկայի մասին և սովորի ինչպես պաշտպանել իր երեխաներին: Սոցիալական աշխատողները կարող են ամիսներով, անգամ տարիներով ներգրավված լինել ընտանիքի աջակցության գործընթացի մեջ:

Ցածր ռիսկայնության դեպքերում աջակցությունն առաջարկվում է միայն այն դեպքում, եթե ընտանիքը համաձայն է աշխատել սոցիալական աշխատողի հետ: Եթե ընտանիքը հրաժարվում է սոցիալական ծառայությունների հետ աշխատել, գործը փակվում է: Բարձր ռիսկայնության դեպքերում երեխային ընդգրկում են երեխայի պաշտպանության պլան կոչվող նախագծի մեջ, ինչը նշանակում է, որ ընտանիքը ըստ օրենքի պետք է համագործակցի սոցիալական աշխատողի հետ և համաձայնությունը չի դիտարկվում: Եթե համարվում

Է, որ երեխայի համար ռիսկերը զգալի են, կամ եթե ընտանիքը հրաժարվում է ներգրավվել, սոցիալական աշխատողների խումբը կարող է խնամակալության համար վարույթ սկսել և դիմել դատարան՝ հայտ ներկայացնելով, որ երեխային հանձնեն ընտանիքի այլ անդամների կամ խնամակալ ընտանիքի խնամքին: Սովորաբար նախընտրելի է երեխաների խնամքը հանձնել ընտանիքի այլ անդամների (տատիկ, պապիկ, հորաքույր, մորաքույր և այլն) կամ ընկերների, որոնց մանրագնահատված քննել են և գնահատել, որ նրանք կարող են հոգ տանել երեխայի մասին:

Նախքան որոշում կայացնելը ընտանիքի գործը քննող դատավորը հիմք է ընդունում համապատասխան օրենսդրությունը և որոշում կայացնում՝ ելնելով այդ պահին երեխայի շահերից: Եթե համարվում է, որ երեխային ուղղակիորեն մեծ վտանգ է սպառնում, դատավորը կարճաժամկետ կարգադրություն է տալիս (հայտնի որպես ժամանակավոր խնամակալության հրաման), որի դեպքում դատավարության ողջ ընթացքում երեխային հեռացնում են տնից: Եթե համարվում է, որ երեխան ուղղակիորեն վտանգված չէ, նա շարունակում է մնալ տանը վարույթի ողջ ընթացքում: «Պետական խնամակալության վերաբերյալ վարույթը» այն գործընթացն է, որի ժամանակ տեղական իշխանությունները և ծնողները դատավարության տիրույթում փորձում են երեխայի համար ապահովել

լավագույն վերջնարդյունքը: Խնամակալության վերաբերյալ վարույթները պետք է ամփոփվեն 26 շաբաթվա ընթացքում, և ակնկալվում է, որ այս ընթացքում ծնողներն աշխատեն խնդրահարույց հարցերի ուղղությամբ. եթե ծնողները հիմնավորեն, որ անդրադարձել են այս խնդրահարույց հարցերին, կարող են իրենց խնամակալության տակ պահել երեխային, կամ երեխան կարող է վերադառնալ տուն: Եթե ծնողներին չի հաջողվում ապացուցել, որ իրենք ի վիճակի են ապահովել երեխայի անվտանգությունը, երեխայի խնամքը հանձնում են այլընտրանքային խնամակալին կամ երեխան շարունակում է մնալ այլընտրանքային խնամակալության ներքո մինչև 18 տարին լրանալը:

Ընտանեկան հարցերով զբաղվող դատավորները քննում են նաև երեխայի խնամակալության վերաբերյալ դատական վեճերը. այսպիսի դեպքերում սոցիալական աշխատողը ներկա է լինում միայն այն դեպքում, երբ կան մտահոգություններ մոր կամ հոր ծնող լինելու կարողությունների վերաբերյալ: Խնամակալության վերաբերյալ գործերի մեծամասնության պարագայում երեխաների և ընտանիքի հարցերով դատարանի խորհրդատվությունների և աջակցության ծառայության (Children and Family Court Advisory and Support Service (CAFCASS)) ներկայացուցիչը ձեռնարկում է ծնողների գնահատման աշխատանք և դատարանին եզրակացություն է տալիս այն մասին, թե ինչն է ըստ իր գնահատման երեխայի շահերից ելնելով լավագույն լուծումը: Այս

գնահատումների ժամանակ դիտարկվում է, թե յուրաքանչյուր ծնող որքանով կարող է հոգալ երեխայի կարիքները, և թե արդյոք ծնողներից որևէ մեկի հետ երեխայի շփումը կարող է որևէ կերպ վնասել երեխային: Սովորաբար դատավորը վճիռ է արձակում, ըստ որի երեխայի և հոր (բնություն կատարող) շփումը պետք է լինի վերահսկող անձի ներկայությամբ. սա սովորաբար կարճաժամկետ է, նպատակ ունի գնահատել, թե հայրը որքանով կարող է հոգալ երեխայի հուզական (եմոցիոնալ) կարիքները և ժամանակավոր լուծում է, մինչև հայրը կավարտի բռնարարների վերադաստիարակության համար նախատեսված ծրագիրը: Վերահսկվող շփումը տեղի է ունենում շփման համար նախատեսված չեզոք վայրում՝ վերահսկողի մշտական ներկայությամբ. զոհերը նույնպես պաշտպանված են լինում, և միջոցներ են ձեռնարկվում ապահովելու համար, որ երեխայի հետ տեսակցության ժամանակ նրանք բռնարարի հետ շփում չունենան:

Ընդհանուր առմամբ բոլոր մասնագիտացված գործակալությունները ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաներին և զոհերին պաշտպանելու պատասխանատվություն ունեն (Working Together, 2015): Երբ օրինակ բժիշկը կամ ուսուցիչը մտավախություն ունի, որ կինը կամ երեխան բռնության միջավայրում են ապրում, նա դրա մասին պետք է տեղեկացնի երեխաների սոցիալական խնամքի ծառայությանը, ինչպես նաև դիմի բազմաթիվ գործակալությունների կողմից համատեղ

անցկացվող ռիսկերի գնահատման համաժողովին¹ (Multi Agency Risk Assessment Conference (MARAC)): Այս համաժողովին (MARAC) մասնակցում են բազմաթիվ գործակալություններ (այդ թվում՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, բժիշկներ, ոստիկանության աշխատակիցներ և թմրանյութերի չարաշահման հարցերով զբաղվող աշխատողներ). քննարկվում են մորը և երեխային հետագա բռնությունից պաշտպանելու ռազմավարություններ: Ընտանեկան բռնության միջավայրում ապրած երեխաներին հաճախ ուղղորդում են երեխաների և դեռահասների հոգեկան առողջության հարցերով զբաղվող մասնագետների մոտ՝ հոգեբանական աջակցություն ստանալու համար: Այս մասնագետները աշխատում են երեխայի հետ և օգնում նրանց «մարսել» իրավիճակն ու ի հայտ բերել իրենց եմոցիաները: Մեծ Բրիտանիայի շատ դպրոցներում նույնպես կան ուսումնական հարցերով մենտորներ, հոգեբաններ և մանկավարժ-խորհրդատուներ, որոնք բռնության միջավայրում ապրող երեխաներին օգնում են ընկալել իրենց փորձառությունն ու հաղթահարել այն: Սա, իր հերթին, նվազեցնում է այս երեխաների մոտ ավելի հասուն տարիքում հոգեկան առողջության խնդիրներ առաջանալու հավանականությունը:

¹ Ինֆորմացիայի փոխանակման և ռիսկերի կառավարման գոհակենտրոն համաժողով, որի շրջանակներում գործակալությունները քննարկում են բռնության զոհերի, ինչպես նաև նրանց երեխաների վրա բռնության սպառնալիքի հետագա ռիսկը և այդ ռիսկը կառավարելու պլան են մշակում:

Կան նաև ինքնօգնության խմբեր ընտանեկան բռնության ենթարկված երեխաների համար: Այդ խմբերը նրանց հնարավորություն են տալիս շփվել նմանատիպ իրավիճակներում հայտնված երեխաների հետ: Դրանք սովորաբար գործում են ընտանեկան բռնության զոհերի աջակցման խմբերին զուգահեռ, որոնց միջոցով կանայք սովորում են առողջ հարաբերությունների և երեխաների վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին: Մեծ Բրիտանիայի որոշ շրջաններում կան նաև բռնարարների համար նախատեսված ծրագրեր, որոնց շրջանակներում տղամարդկանց հնարավորություն է տրվում սովորել, թե ինչպես կարող են փոխել իրենց վարքագիծը: Այս ծրագրերը սովորաբար տևում են մի քանի ամիս և օգնում են բռնարարին վերանայել բռնության վերաբերյալ իր հայացքներն ու տեսակետը և իրազեկվել երեխաների վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին: Այս ծրագրերը դիտարկում են բռնարարի հետ աշխատելը միայն այն դեպքում, եթե նա սկսել է գիտակցել իր վարքագիծը և աջակցության կարիք է զգում: Ընդունված է, որ ընտանեկան հարցերով զբաղվող դատավորները կայացնեն որոշում (և՛ խնամակալության վերաբերյալ գործերի, և՛ խնամքի մասին վարույթների դեպքում), որի համաձայն բռնարարը պետք է ներգրավվի ընտանեկան բռնություն կատարողների համար նախատեսված ուղղիչ ծրագրերում. սրան նույնպես ընթացք է տրվում միայն այն դեպքում, եթե բռնարարը ընդունում է իր սխալ վարվելակերպը:

Ընտանեկան բռնության շվեդական մոդելը

Շվեդիայի արձագանքը ընտանեկան բռնությանը շատ նմանություններ ունի Մեծ Բրիտանիայի մոդելի հետ: Շվեդական ոստիկանությունը մատուցում է արտակարգ իրավիճակների ծառայություն, որին զոհերը կարող են զանգահարել անմիջական վտանգի դեպքում: Ընտանեկան բռնությանն առնչվող խնդիրներին արձագանքող ոստիկանության աշխատակիցները մասնագիտացված ստորաբաժանումների՝ հատուկ պատրաստվածություն ունեցող սպաներ են, որոնք գնահատում են ռիսկերը՝ անհրաժեշտ պաշտպանություն որոշելու համար: Ոստիկանությունը կարող է պաշտպանության կարգադրություններ տալ և կարող է տեխնիկական աջակցություն ապահովել, ինչպես օրինակ գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող հեռախոսներ և ազդանշանային համակարգ՝ զոհերի անվտանգությունն ապահովելու համար: Այս աշխատակիցները նաև երեխաների հետ խոսելու և ռիսկերի գնահատման հատուկ պատրաստվածություն ունեն, որպեսզի կարողանան որոշել երեխայի համար առկա ռիսկերը. եթե ռիսկը բավականաչափ բարձր է համարվում, ոստիկանությունը տեղեկացնում է երեխայի պաշտպանության սոցիալական ծառայություններին: Ընտանեկան բռնության խնդիրներով զբաղվող շվեդական ոստիկանության աշխատակիցները այժմ իրենց հետ տեսախցիկներ են ունենում, որոնք կարող են օգտագործել դեպքի վայրում տեսագրությունների

համար: Այս տեսագրությունները կարող են օգտագործվել որպես քրեական գործ հարուցելու հիմք, անգամ եթե զոհի վրա ճշում են գործադրել հայտը հետ վերցնելու համար: Այնուհետև դատախազը, ոչ թե զոհը, որոշում է կայացնում քրեական պատասխանատվության ենթարկելու մասին՝ այսպիսով զոհին ու նրա երեխաներին հավելյալ պաշտպանություն ապահովելով: Դատախազությունը կարող է նաև շփումն արգելող կարգադրություն անել՝ կանխելով բռնարարի շփումը զոհի հետ: Կանչից հետո ոստիկանությունը կարող է դիմել զոհերի աջակցման մասնագիտացած ծառայությունների աշխատակիցներին, որոնք կստանձնեն ընտանիքի հետագա աջակցությունը: Չոհերի աջակցման ծառայությունների այս աշխատակիցները զոհին տեղեկատվություն կտրամադրեն և կառաջարկեն միանալ զոհերի աջակցման խմբերի: Ինչպես Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում նույնպես գործում է ընտանեկան բռնության հարցերով թեժ գիծ, որին զոհերը կարող են զանգել, եթե չեն կարող կամ վախենում են զանգել ոստիկանություն: Այս թեժ գծի միջոցով նրանք կարող են նաև տեղեկություններ ստանալ երկրի ողջ տարածքում գործող ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված ապաստանների մասին:

Շվեդիայում գործում է նաև երեխաների պաշտպանության գործակալություն, որը ֆինանսավորվում և ղեկավարվում է պետության կողմից: Երբ ոստիկանության աշխատակիցը, ուսուցիչը, բժիշկը կամ հարևանը մտավախություն


ունեն, որ երեխան ապրում է ընտանեկան բռնության միջավայրում, կարող են անանուն զանգ կատարել և այդ մասին տեղեկացնել երեխաների պաշտպանության տեղական ծառայությանը: Այս պարագայում ծանուցում է ստանում սոցիալական ծառայության հատուկ ստորաբաժանումը. այս ստորաբաժանումը զոհակենտրոն մոտեցման հատուկ պատրաստվածություն ունի, որպեսզի կարողանա օգնել զոհերին և ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաներին: Սկսած 2014թ.-ից, այս ստորաբաժանումը պետք է, ըստ օրենքի, իրականացնի երեխայի պաշտպանության հետաքննություն, եթե որևէ մտավախություն կա, որ երեխան ապրում է բռնության միջավայրում: Այնուհետև սոցիալական աշխատողները հանդիպում են երեխայի ու ընտանիքի հետ և սկսում ռիսկերի բազմակողմանի գնահատում: Այս գնահատումը մանրամասնում է ընտանիքի կարիքները և ընտանիքի աջակցման պլան է նախագծվում, որը կօգնի երեխային հետագա վտանգից հեռու պահել: Եթե ռիսկը երեխայի համար չափազանց զգալի է համարվում, սոցիալական աշխատողը դիմում է դատարան՝ երեխային ներկա իրավիճակից հեռու պահելու և նրա համար անվտանգ ընտանեկան միջավայր ապահովելու համար: Դատավարության մոդելը շատ նման է Մեծ Բրիտանիայի մոդելին: Այստեղ նույնպես ինսամակալության վերաբերյալ որոշումները կայացվում են հիմնվելով այն բանի վրա, թե ով կարող է երեխայի համար ավելի լավ ինսամք ապահովել և ով կարող է հոգալ երեխայի ֆիզիկական

և հուզական (Էմոցիոնալ) կարիքները: Երեխաները դատական լսումների ժամանակ վկայություն չեն տալիս (Ֆիզիկապես ներկա չեն) և հնարավորություն ունեն ընտրելու, թե արդյոք ցանկանում են ընդհանրապես վկայություն տալ, թե ոչ: Եթե երեխան համաձայն է, նրա հետ զրուցում են հատուկ պատրաստվածություն ունեցող աշխատակիցները, այդ զրույցը ձայնագրվում է և ներկայացվում դատարանում:

Ընդհանուր առմամբ, Շվեդիայի կառավարությունը ջանք չի խնայում Շվեդիայի հասարակության բոլոր շերտերում գենդերային հավասարությունը խթանելու համար: Այս նպատակի շրջանակներում կառավարությունը 2014թ. վավերացրեց Ստամբուլյան կոնվենցիան և դրանից հետո մշակել է 10 տարվա ռազմավարություն (2016-2026)՝ կանանց դեմ ընտանեկան բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու ուղղությամբ: Այս ռազմավարությունը խրախուսում է մտածողության փոփոխություն՝ կանանց հանդեպ բռնության դեմ պայքարի նկատմամբ մոտեցումը ռեակտիվից ավելի պրոակտիվ դարձնելու ուղղությամբ. այն իր մեջ ներառում է մի շարք նախաձեռնություններ, որոնք նախագծվել են այս նպատակին հասնելու համար: Շվեդիայի կառավարությունն առաջարկել է, որ տղաներն ու տղամարդիկ ավելի լայն և ավելի կառուցողական ներգրավվածություն ունենան՝ բռնությունն արդարացնող նորմերին հակազդելու համար: Այս ամենը հաշվի

առնելով՝ երկրի ողջ տարածքում ձևավորվել են երիտասարդ տղամարդկանց խմբեր, որոնք պատմում են հասարակության մեջ առկա մաչո-մշակույթի և դրա նշանների ու հետևանքների մասին: Դպրոցներում նույնպես ծրագրեր են մշակվել՝ կանանց նկատմամբ կիրառվող բռնության մասին իրազեկվածությունը բարձրացնելու և երիտասարդներին օգնելու արձագանքել բռնությանն ու հոգեբանական ճնշմանը և կանխել դրանք: Բացի այդ 28 կազմակերպություններ, Ընտանեկան բռնության դեմ պայքարի համապարփակ ծրագիր (Integrated Domestic Abuse Program) կոչվող մոդելի շրջանակներում, աշխատանքներ են ծավալում արական սեռի բնարարներին աջակցություն և խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ: Այս ամենը վկայում է այն մասին, որ ընտանեկան բռնության դեմ արձագանքը պետք է համալիր մոտեցում ունենա՝ փոքր տարիքից սկսած տղաների հետ աշխատանք տանելով:

IV. Ազգային քաղաքականությունն ու Հայաստանում գործող ծրագրերը



IV. Ազգային քաղաքականությունն ու Հայաստանում գործող ծրագրերը

Ստորև ներկայացված բաժնում նկարագրվում են օրենսդրության բացերը, իրավապահ մարմինների և քրեական արդարադատության մարմինների թույլ արձագանքը ընտանեկան բռնությանը, ինչպես նաև Հայաստանում երեխաների պաշտպանության ծառայությունների բացակայությունը:

Ընտանեկան բռնության վերաբերյալ օրենսդրություն

Գործող համակարգի առաջին բացը վերաբերում է օրենսդրությանը: 2018թ. Հայաստանում ընդունվեց ընտանեկան բռնության մասին օրենք: Առաջընթաց լինելով հանդերձ՝ այս օրենքը չի քրեականացնում ընտանեկան բռնությունը որպես քրեական օրենսգրքում առանձին հանցագործության տեսակ: Փոխարենը, ընտանեկան բռնությունը դիտարկվում է Ընտանեկան օրենքի շրջանակներում, ինչը բռնարարներին պատժելու պատշաճ մեխանիզմներ չունի: Օրենքը ճանաչում է ֆիզիկական, սեռական, տնտեսական և ֆիզիոլոգիական բռնությունը, բայց ներկայումս միայն ֆիզիկական և սեռական բռնությունն են քրեորեն պատժելի: Բացի այդ, օրենսդրության մեջ կան «ընտանիքում համերաշխության վերականգնման» անհրաժեշտության

մասին բազմաթիվ հղումներ: Սա վտանգավոր է, քանի որ կարող է բռնության զոհերին խրախուսել կամ ճնշում գործադրել, որ նա հաշտվի բռնարարի հետ: Օրենքի մեջ բացակայում է նաև ընտանեկան բռնության պատշաճ սահմանումը, քանի որ չի դիտարկում զուգընկերոջ/ամուսնու կողմից կատարվող բռնությունը, ինչպես նաև չի դիտարկում հետապնդումը որպես բռնության ձև: Օրենսդրության մեջ կա նաև մի շատ վտանգավոր կետ (105-րդ հոդված), ըստ որի զոհի անբարո վարքը (ինչպես օրինակ դավաճանության մեղադրանքը) կարող է հանգեցնել բռնարարի ուղեղի ժամանակավոր մթազնման. սա մեղմացնում է բռնարարի քրեական պատասխանատվությունը և հանգեցրել է Հայաստանում մի շարք սպանության դեպքերի համար շատ թեթև դատավճիռների: Օրենքի մեջ նշվում է նաև, որ եթե ոստիկանությունն արձագանքում է ընտանեկան բռնության առաջին գրանցված միջադեպին, բռնարարի նկատմամբ պետք է կիրառվի նախազգուշացում: Այս օրենքը հաշվի չի առնում միջադեպի ծանրությունը, նաև հաշվի չի առնում, որ ընտանեկան բռնությունը հիմնականում տեղի է ունենում երկար տարիներ, նախքան զոհը աջակցության դիմելու համարձակություն է գտնում: Սա չափազանց սխալ է և վտանգավոր, և չի ընդունվում միջազգային չափանիշներով (տես Եվրոպայի հորհրդի՝ Ոստիկանության ուղեցույցը (Council of Europe Police Guidelines): Ներկայիս օրենսդրությունը բռնության միջավայրում ապրող

երեխաների պաշտպանության համար որևէ միջոցներ չի նախատեսում, և ոստիկանությունը չի կարող միջոցներ ձեռնարկել բռնության միջավայրում ապրող կամ վտանգի մեջ գտնվող երեխային պաշտպանելու համար:

Հատկանշական է, որ Հայաստանի կառավարությունը վերջերս ստորագրել է Ստամբուլյան կոնվենցիան: Կոնվենցիան ընդունած բոլոր անդամ երկրները այն կիրառում են իրենց գործող օրենսդրության բացերը վերացնելու համար, որպեսզի ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց և երեխաներին ավելի լավ պաշտպանություն առաջարկեն և բռնարարների քրեական հետապնդումը հեշտացնեն: Չնայած Հայաստանի կառավարությունը ստորագրել է Կոնվենցիան, սակայն դեռ չի վավերացրել այն՝ կոնվենցիայի դեմ ուժեղ ընդդիմադիր շարժման առկայության պատճառով: Այդ շարժման հիմքում այն թյուր կարծիքն է, թե Կոնվենցիան վտանգ է ավանդական ընտանեկան արժեքների և ընտանիքի կառուցվածքի համար: Ընտանեկան բռնության վերաբերյալ համատարած թյուրըմբռումների արմատները վնասակար գենդերային կարծրատիպերի մեջ են: Այս կարծրատիպերի դեմ պայքարելը և երեխաներին, կանանց և հասարակությանը բռնության պատճառած մեծ վնասի մասին հանրությանն իրազեկելը, կօգնի հող նախապատրաստել Հայաստանում անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու համար: Այս իմաստով կոնվենցիան կանանց դեմ բռնությունը կանխարգելելու,

զոհերին պաշտպանելու, բռնարարերին պատշաճ կերպով քրեական պատասխանատվության ենթարկելու և հասարակության լայն շերտերին ընտանեկան բռնության հետևանքների մասին իրազեկելու հենք է տալիս: Կոնվենցիան նաև մանրամասն նկարագրում է, թե երկրները ինչպես պետք է աջակցեն ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաներին: Ներկայումս, Կոնվենցիայի վավերացված չլինելու պարագայում, Հայաստանում ընտանեկան բռնության պայմաններում ապրող ընտանիքներին աջակցել փորձող գործակալությունների աշխատանքներում շատ բացեր կան:

Ընտանեկան բռնություն և իրավապահ մարմիններ

Երկրորդ բացը վերաբերում է իրավապահ մարմինների ներկայիս համակարգին և արագ արձագանքման ծառայություններին, այդ թվում նաև ոստիկանությանը: Ներկայումս Հայաստանում չկա ընտանեկան բռնության հարցերի թեժ գիծ, որը պարտադիր է Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու դեպքում: Թեժ գծերը հիմնականում ՀԿ-ների վերահսկողության տակ են, որոնք չեն աշխատում աշխատանքային ժամերից դուրս, և զանգերին պատասխանողները միշտ չէ, որ ռիսկերը գնահատելու պատրաստվածություն ունեն, չգիտեն ինչպես տրամադրել զոհի շահերից բխող աջակցություն: Ներկայումս զոհերը դեպքի մասին հայտնելու և

պաշտպանություն խնդրելու համար զանգում են ոստիկանության ընդհանուր համարին: Հայաստանում օրենքը հստակ կերպով սահմանում է, որ ընտանեկան բռնության ահազանգին արձագանքող ոստիկանը պետք է գաղտնի զրույց ունենա զոհի և ներկա գտնվող երեխաների հետ: Ոստիկանությունը պետք է նաև որոշի վնասվածքների ծանրության աստիճանը, գնահատի իրավիճակի ռիսկայնությունը և կամ ձերբակալի բռնարարին, անհետաձգելի միջամտության որոշում կայացնի, կամ բռնարարին նախազգուշացում տա: Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն զոհերը պետք է վնասի փոխհատուցում ստանան մինչև 15,000 ՀՀ դրամի չափով՝ բժշկական ծախսերը կամ ժամանակավոր բնակության ծախսերը հոգալու համար: Մինչ օրս ֆինանսական փոխհատուցման ոչ մի դիմում չի ներկայացվել, քանի որ գործընթացը զոհերի շահերից չի բխում, չափազանց բարդ է և վերաբերում է միայն վատ սոցիալ-տնտեսական պայմաններ ունեցողներին: Հայաստանում ամուսնությունների մեծ մասը քաղաքացիական ամուսնություններ են, ինչը նշանակում է ամուսնալուծությունը օրենքով չի լինում, հետևաբար չկա ամուսնալուծությունից հետո ունեցվածքի իրավունք: Այդ պատճառով կանանց համար շատ դժվար է իրենց ամուսնուց/զուգընկերոջից բաժանվելը (անկախ նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակից), քանի որ հաճախ նրանք զնալու տեղ և եկամտի աղբյուր չեն ունենում: Ցավոք, ներկայումս ոստիկանությունը չի հետևում

գոյություն ունեցող օրենքերին: Դեպքի վայր կանչից հետո հազվադեպ է, որ զոհի վնասների մասին զեկուցվում կամ նկարագրվում է ոստիկանության փաստաթղթերում: Ոստիկանները համապատասխան պատրաստվածություն չունեն ուսումնասիրելու համար զոհի ու երեխաների վարքագիծը տանը և վկաներ չեն փնտրում: Ոստիկանության կողմից ռիսկերի գնահատումը պատշաճ չէ և չի ներառում բռնության ծանրության կամ բռնության տեսակի վերաբերյալ տեղեկություններ. հայտնի է, որ բռնության որոշ տեսակներ (ինչպես օրինակ խեղդելը) զոհի համար մահվան չափազանց բարձր ռիսկայնություն ունեն, սակայն սա ոստիկանության կողմից ռիսկերի գնահատման մեջ չի դիտարկվում: Հաճախ երեխաները չափազանց վախենում են, երբ ոստիկանությունը տուն է գալիս և կարող են իրենք իրենց մեղադրել կատարվածի համար. ոստիկանները չեն հանգստացնում երեխաներին և չեն փորձում աջակցել նրանց: Ընդհանուր առմամբ ոստիկանությունը հակված է նվազեցնել միջադեպի լրջությունը և միայն նախազգուշացում է տալիս, անգամ եթե բռնությունը տարիներով շարունակվել է: Հավանաբար ամենամտահոգիչն այն է, որ որոշ ոստիկաններ իրենց վրա պատասխանատվություն են վերցնում համոզել ընտանիքին հաշտվել, ինչը տեղին չէ, և բռնարարի իրավունքները վեր է դասում զոհի իրավունքներից: Ոստիկանության աշխատակցի արժեքները, համոզմունքներն ու տեսակետները չպետք է խոչընդոտեն առաջարկվող աջակցությանը:

Ցավոք, անգամ եթե օրենքը պահանջում է գործողություններ ոստիկանության կողմից, ոստիկանները հազվադեպ են այն կիրառում: Ներկայումս կարծես թե գոյություն ունի նաև խնդիր, երբ ոստիկանությունը չի կարողանում որոշել, թե ով է բռնարարը: Ոստիկանությունը պաշտոնապես հաղորդել է, որ ընտանեկան բռնության 40% կանչերի դեպքում բռնություն կատարողները կանայք են. սա ուղղակիորեն հակասում է ամբողջ աշխարհից հավաքագրած տվյալներին, ըստ որոնց բռնարարների 98%-ը արական սեռի ներկայացուցիչներ են (Եվրոպայի խորհրդի և քաղաքացիական հասարակության հանդիպման ժամանակ ոստիկանության զեկույց, 2019): Այս իմաստով ոստիկանությունը ընտանեկան բռնության դինամիկան հասկանալու, ինչպես նաև հարկադրանքի, վերահսկող և սպառնացող վարքագծերը տարբերակելու պատրաստվածություն չունի: Ավելին, ոստիկանությունը որպես կանոն ճանաչում է ընտանեկան բռնությունը միայն մարմնական վնասվածքի առկայության դեպքում և չի կարողանում տարբերակել բռնության այլ տեսակները:

Եական է, որ ոստիկանությունը նախապատվությունը տա կանանց և երեխաների անվտանգությանը: Ցավոք, այդպես չէ: Ոստիկանության զեկույցների համաձայն՝ դեպքերի 75%-ի պարագայում ոստիկանությունը պարզապես նախազգուշացում է կիրառել բռնարարի նկատմամբ և զոհին նշանակալի աջակցություն ցույց չի տվել (Ոստիկանության զեկույց տարբեր հանդիպումների

ժամանակ, 2019): Կանանց և երեխաների անվտանգությունն ապահովելու տեսանկյունից նախազգուշացումը միջազգայնորեն համարվում է ոչ արդյունավետ: Անհետաձգելի միջամտության որոշումը հաճախ կայացվում է կամայականորեն և սուբյեկտիվ կերպով, և միայն 1-5 օրվա ուժ ունի, ինչը բավարար ժամանակ չէ, որ զոհը պլանավորի իր ու իր երեխաների անվտանգությունը: Հաճախ զոհը անհետաձգելի միջամտության որոշման համար պետք է ոստիկանության բաժանմունք գնա, սակայն այդ որոշման վերաբերյալ որևէ փաստաթուղթ նրան չի տրամադրվում: Ավելին, երբ պաշտպանության կարգադրությունը խախտվում է, ոստիկանությունը պետք է անմիջապես պատժամիջոց կիրառի բռնարարի նկատմամբ. մինչև օրս կարգադրության բազմաթիվ խախտումներ են եղել, բայց ոչ մի բռնարար պատասխանատվության չի ենթարկվել: Արդյունքում, ընտանեկան բռնության զոհերը հավատ չունեն, որ ոստիկանությունը կապահովի իրենց անվտանգությունը:

Եթե զոհը բռնարարի դեմ մեղադրանքներ առաջադրելու համարձակություն ունի, նրան երկար ու ցավոտ գործընթաց է սպասվում: Նախ, բռնարարին ու զոհին հաճախ միասին են տանում ոստիկանության բաժանմունք և զոհը ստիպված է ներկայացնել մեղադրանքը բռնարարի ներկայությամբ: Սա ընդհանրապես ճիշտ չէ, քանի որ զոհը չի կարողանում

իրեն բռնության ենթարկած անձի ներկայությամբ բացահայտ ու անկաշկանդ խոսել կատարվածի մասին, և արդյունքում, շատ զոհեր այս փուլում հետ են վերցնում իրենց բողոք-հայտը: Որոշ դեպքերում կանայք ստիպված են տհաճ ու նվաստացնող բժշկական հետազոտություններ անցնել՝ ապացույցներ հավաքելու համար. այս հետազոտությունների մեջ մտնում են կուսության ստուգումները՝ սեռական բռնության դեպքում, ինչը հակասում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Եթե այնուամենայնիվ զոհը մեղադրանքը առաջ տանելու համարձակություն և համառություն ունի, պետք է ամեն ինչ նորից կրկնի դատախազության քննիչի մոտ: Ցավոք, այս քննիչները հաճախ մեղմացնում են զոհի վիճակը կամ նրա վրա ճնշում են գործադրում, որպեսզի նա հրաժարվի մեղադրանքից: Դժբախտաբար, հաճախ այս ճնշման հետևանքով շատ զոհեր անկարող են զգում այս փուլում շարունակել գործընթացը: Կարևոր է նշել նաև, որ և՛ ոստիկանությունը, և՛ քննիչը հաճախ խախտում են գաղտնիությունը և բռնարարին հայտնում են զոհի գտնվելու վայրը՝ զոհին հետագա բռնության բարձր ռիսկի ենթարկելով:

Ընտանեկան բռնությունն ու քրեական արդարադատության համակարգը

Համակարգի երրորդ բացը կապված է Հայաստանի դատական համակարգի հետ: Դատական համակարգի աշխատողները ընտանեկան բռնության մասին

գիտելիքներ կամ դրա վերաբերյալ պատրաստվածություն չունեն. նրանք նրբանկատ չեն զոհերի ապրումների և կարիքների նկատմամբ: Ներկայումս չկա հստակ կարգ կամ ուղեցույց, թե ինչպես պետք է վարվել ընտանեկան բռնության դեպքերի հետ, և այդ պատճառով գործերը քննվում են ընդհանուր քրեական դատավարության շրջանակներում: Սա նշանակում է, որ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերը կարող են ամիսներով (եթե ոչ տարիներով) քննվել, մինչդեռ զոհը շարունակում է վտանգված լինել: Սա նաև նշանակում է, որ զոհերին և երեխաներին դատարանում կամ դրանից դուրս հարցաքննելու ընթացակարգերում հաշվի չի առնվում նրանց անվտանգությունը: Ավելին, դատական ծախսերը հոգում է դիմող կողմը (զոհը), ինչի պատճառով շատ կանայք զրկվում են արդարության հասնելու հնարավորությունից: Չոհը դատարանում կարող է դիմել պաշտպանության կարգադրություն ստանալու համար, ինչը բռնարարին արգելում է 6 ամսվա ընթացքում կապ հաստատել զոհի հետ: Ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարաձգվել ևս 6 ամսով: Այս կարգադրության համաձայն՝ բռնարարը պետք է զոհից (և անհրաժեշտության դեպքում նրա խնամակալության տակ գտնվող երեխաներից) մշտապես հեռու մնա և չի կարող մոտենալ զոհի բնակության, աշխատանքի կամ ժամանցի վայրերին: Ցավոք պաշտպանության կարգադրություն ստանալու գործընթացը շատ բարդ է: Չոհը հազիվ թե ստանա պաշտպանության

կարգադրություն, եթե արդեն չկա անհետաձգելի միջամտության որոշում, և դատարանը թույլ չի տալիս որպես ապացույց ներկայացնել մասնագետների (ինչպես օրինակ՝ սոցիալական աշխատողներ կամ հոգեբաններ) հաշվետվությունները: Պաշտպանության կարգադրությունները նաև հաճախ խախտվում են, և պետությունը հազվադեպ է այդ դեպքում բնարարին պատասխանատվության ենթարկում:

Ստամբուլյան կոնվենցիան նշում է, որ տեսակցության կամ խնամակալության իրավունքները չպետք է վտանգեն երեխաների և զոհերի անվտանգությունը կամ իրավունքները: Ցավոք, զոհերի և նրանց երեխաների անվտանգությունը հաճախ անտեսվում է Հայաստանում: Քանի որ դատական քննությունները շատ երկար են տևում, երեխաները շարունակում են ապրել բռնարարի հետ, և այդպիսով երեխան ու զոհը հետագա բռնության վտանգի են ենթարկվում: Եթե այդ ընթացքում մայրն առանձին է ապրում, բռնարարը հաճախ նրան զրկում է երեխաներին տեսնելու հնարավորությունից: Դժբախտաբար դատավորները շատ սուբյեկտիվ են որոշումներ կայացնելու հարցում. նրանց որոշումների մեջ հաճախ արտացոլվում են հասարակության լայն շրջանակների գենդերային կարծրատիպերը, և որոշումներն անաչառ չեն լինում: Հաճախ դատավորները պահանջում են, որ փոքր երեխաները (օրինակ 5 տարեկան) ներկայանան դատարան և պատասխանեն

իրենց հարցերին: Սա խիստ անընդունելի է, երեխաների իրավունքների խախտում է և անխուսափելիորեն դառնում է երեխաների հուզական (եմոցիոնալ) սթրեսի պատճառ, քանի որ նրանք դժվարանում են հավասարակշռության բերել ծնողների հանդեպ ունեցած հոգեկան կապվածությունը:

Դատավորների կողմից որոշումները կայացվում են այն սկզբունքով, որ բռնարարներն ու զոհերը հավասար իրավունքներ ունեն, այդ պատճառով ընտանեկան բռնության առկայությունը մեծ ազդեցություն չի ունենում դատավորների որոշումների վրա: Իրականում բռնարարների հանդեպ հաճախ են բարենպաստ դատավճիռներ կայացվում: Շատ մեծ կարևորություն է տրվում կողմերի նյութական բարեկեցությանը, քանի որ համարվում է, որ այն ցույց է տալիս, թե ծնողը ինչ չափով կարող է հոգ տանել երեխայի մասին: Դատավճիռից հետո բռնարարները սովորաբար խախտում են կարգադրությունները և խոչընդոտներ են ստեղծում, որ մայրը ստանձնի իր ծնողական պարտականությունները, օգտվի խնամակալության կամ տեսակցության իրավունքներից: Այս խախտումները հազվադեպ են քրեորեն հետապնդվում, և հաճախ իրավապահ մարմինների աշխատակիցները բռնարարի կողմն են անցնում: Հայաստանում ծնողների հետ տեսակցությունը վերահսկվող կենտրոնների անհրաժեշտություն կա, քանի որ դեպքերի մեծ մասի պարագայում բռնարարի

տեսակցությունը երեխաների հետ անվտանգ չէ և մեծ ռիսկ կա, որ նա կառնանգի երեխային:

Ի վերջո, չկա համակարգված, բազմաոլորտային արձագանք, ինչը խոչընդոտում է, որ կանայք ու երեխաները աջակցություն ստանան քրեական արդարադատության մարմինների կողմից: Ստամբուլյան կոնվենցիան նշում է, որ մասնագետները, ինչպես օրինակ բժիշկները և բուժաշխատողները, պետք է տեղեկացնեն համապատասխան մարմիններին, եթե տեսնում են, որ զոհը դաժան բռնության է ենթարկվել, կամ երբ բավարար հիմք ունեն մտածելու, որ բռնությունը կարող է կրկնվել: Այսպիսի դեպքերում մասնագետները կարող են խախտել գաղտնիության կանոնները՝ զոհերին պաշտպանելու նպատակով: Ներկայումս Հայաստանում այսպես չէ, քանի որ մասնագետները հիմնականում զգուշանում են իրենց մասնագիտության շրջանակներից դուրս հարցերի մեջ ներգրավվելուց, ինչպես նաև հաճախ ընտանեկան բռնության մասին շատ քիչ գիտելիքներ ու պատկերացումներ ունեն: Քանի որ Հայաստանը չի վավերացրել Ստամբուլյան կոնվենցիան, մասնագետները օրենքով պարտավորված չեն համապատասխան մարմիններին հայտնել անվտանգությանը վերաբերող խնդիրների մասին:

Հաշվի առնելով վերոնշյալ բացերը՝ զարմանալի չէ, որ ընտանեկան բռնությունը շարունակում է անվերահսկելի

լինել Հայաստանում: 2018թ.-ին Հայաստանի քննչական կոմիտեն քննել է ընտանեկան բռնության **519** հանցավոր դեպք, որոնցից մինչև օրս ավարտին են հասցվել **393**-ը: Ավարտված դատական քննություններից **297**-ը մերժվել են՝ **91**-ը արդարացման հիմքով, **206**-ը՝ փաստերի բացակայության պատճառով: Այս տվյալներից կարելի է տեսնել, որ դեպքերի մոտավորապես կեսը մերժվել է Քննչական կոմիտեի կողմից: Սա նորից մատնանշում է Հայաստանում ընտանեկան բռնության քրեականացված չլինելը և ցույց է տալիս, որ շատ բռնարարներ պատասխանատվության չեն ենթարկվում իրենց արարքների համար: Չոհերի համար արդարության հասնելու փոքր հավանականության պատճառով շատ զոհեր հաճախ չեն ցանկանում ոստիկանությանը տեղեկացնել ընտանեկան բռնության մասին: Երբ կանայք մտադրվում են դիմել ոստիկանությանը, հաճախ չեն ցանկանում անցնել երկարատև դատական գործընթացների միջով, քանի որ հավանականությունը փոքր է, որ դատարանը իրենց օգտին որոշում կկայացնի, հավանական է նաև, որ քրեական արդարադատության համակարգի մեջ ներգրավվածների կողմից նվաստացնող և ճնշող վերաբերմունքի կարժանանան:

Ընտանեկան բռնությունը և երեխաների պաշտպանության ծառայությունները

Համակարգի ամենամեծ բացերից մեկը երեխաների պաշտպանությունն է և սոցիալական ծառայությունները:

2019թ. հայտարարվեց, որ երեխաների ցերեկային խնամքի կենտրոնները պետք է զբաղվեն ընտանեկան բռնության բոլոր դեպքերով: Այս կենտրոնների սոցիալական աշխատողները հատուկ պատրաստվածություն չունեն և չգիտեն ինչպես գնահատել ռսիկերը, կամ ինչպես օգնել զոհերին՝ ռազմավարություն կամ անվտանգության պլան մշակել: Սոցիալական աշխատողներից շատերը նույնպես կանխակալ կարծիք ունեն բռնության զոհերի վերաբերյալ և երբեմն կանանց են մեղադրում բռնարարին սադրելու համար: Հաճախ զոհերը չեն դիմում ցերեկային խնամքի կենտրոններ և նախընտրում են ոստիկանություն զանգել: Այնուհետև ոստիկանությունը նամակ է ուղարկում մոտակա կենտրոնին. սովորաբար մեկ շաբաթ է պահանջվում, որ այդ նամակը տեղ հասնի: Նամակի մեջ որևէ տեղեկություն չի լինում զոհի կամ իրավիճակի մասին, և շատ կենտրոններ պարզապես անտեսում են նամակը: Որոշ կենտրոններ զոհին հրավիրում են իրենց մոտ, բայց շատ դեպքերում զոհերը անհարմար են զգում գնալ: Ամբողջ գործընթացը շատ դանդաղ է, գաղտնիությունը չի պահվում, և զոհերի անվտանգության սպառնալիք կա: Հայաստանում ընտանեկան բռնության մասնագետների, աջակցման ծառայությունների աշխատողների և զոհերին աջակցելու պատրաստ փաստաբանների խիստ պակաս կա: Այս իմաստով Հայաստանում բացակայում է բազմալորտային արձագանքը ընտանեկան բռնությանը, որի պարագայում մասնագետները համակարգված աշխատում են, որպեսզի

աջակցեն զոհերին ու նրանց երեխաներին և օգնեն այսպիսի մեծ տրավմայից հետո վերադասավորել իրենց կյանքը:

Ցավոք, ներկայումս Հայաստանում երեխաների պաշտպանությունը անկատար է, ոչ արդյունավետ և վատ համակարգված: Հայաստանում շատ քիչ մասնագետներ կան, որոնք մասնագիտացած են երեխաների պաշտպանության ոլորտում: Հայաստանի ամբողջ տարածքում հազարավոր երեխաներ կան, որոնք տանը խնդիրների հետ են առնչվում, այդ թվում՝ թմրանյութերի չարաշահման, հոգեկան առողջության, անտեսման, սեռական բռնության, ֆիզիկական պատժի և ընտանեկան բռնության հետ կապված խնդիրներ:

Ազգային մակարդակում գործում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը: Նախարարությունը հիմնականում պատասխանատու է համազգային կանոնակարգեր ստեղծելու և դրանց վերաբերյալ խորհրդատվությունների համար, իսկ Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումները գործում են յուրաքանչյուր մարզի մակարդակում: Այս ստորաբաժանումներից յուրաքանչյուրը 5-6 ներկայացուցիչ ունի, այդ թվում՝ սոցիալական աշխատող, ուսուցիչ, իրավաբան և բժիշկ: Ստորաբաժանումները հիմնականում

որոշում կայացնող են և խնամակալության ու հոգաբարձության համայնքահեն հանձնաժողովների համակարգողներ: Ինչևէ, այս ստորաբաժանումների դերն ու լիազորությունները չափազանց անհասկանալի են, իսկ կանոնակարգ մշակողների, ՅԿ-ների և հանձնաժողովների հետ համակարգումը շատ թույլ է:

Հանձնաժողովները կազմված են կամավորներից, որոնք տարրական պատրաստվածություն և արհեստավարժություն չունեն: Չնայած, որ նրանց դերը երեխաների բարեկեցության և անվտանգության մասին հոգալն է, այդ ուղղությամբ քիչ քայլեր են ձեռնարկվում, իսկ հանձնաժողովները ՅԿ-ների հետ համակարգված աշխատելու ուղղությամբ գրեթե ջանք չեն թափում: Կամավորներին ընտրում են տեղական համայնքից, ինչը նշանակում է, որ նրանք հաճախ ճանաչում են այն ընտանիքներին, որոնց հետ աշխատում են: Սա կարող է խնդիրներ առաջացնել կապված կողմնակալության, նախապաշարմունքների և անձնական հետաքրքրվածության հետ: Շատ միջադեպեր են եղել, երբ ՅԿ-ները կապվել են հանձնաժողովների հետ և երեխաներին պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու կոչեր արել: Այս կոչերը հիմնականում անտեսվում են, և հետագա գործողություններ հազվադեպ են ձեռնարկվում: 2017թ. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը զեկույց հրապարակեց, որում հստակ նշվում էր, որ խնամակալության և

հոգաբարձության հանձնաժողովները պատշաճ կերպով չեն կատարում իրենց գործառնությունները, և որ աշխատողները արհեստավարժ չեն, չունեն մոտիվացիա և աշխատանքային մեթոդաբանություն: Այս եզրակացությունները արտացոլվեցին Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիայի ստվերային զեկույցում (պատրաստված 45 տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից), որտեղ արձանագրվեց, որ երեխաների իրավունքների պաշտպանությունը հանձնաժողովների համար գերակա խնդիր չէ:

Մասնավորապես, համայնքահեն հանձնաժողովները ընտանեկան բռնության մասին լավ պատկերացում չունեն և չեն գիտակցում կանանց դեմ բռնության լրջությունն ու վտանգը: Կամավորները գրեթե կամ ընդհանրապես չեն հասկանում, թե տրավման ինչ ազդեցություն է ունենում բռնության միջավայրում ապրած կանանց ու երեխաների վրա: Հանձնաժողովները, պաշտպանելով բռնարարների շահերը և դատարանում առաջարկելով, որ երեխաների խնամակալությունը հանձնվի բռնարարին, կարող են այնպիսի որոշումներ կայացնել, որոնց արդյունքում կանայք ու երեխաներն էլ ավելի են ռիսկի ենթարկում: Հանձնաժողովները նաև սովորաբար կողմ են լինում հոր ու երեխաների շփմանը, բայց ոչ մի քայլ չի ձեռնարկվում տեսակցության ժամանակ զոհի անվտանգությունը ապահովելու համար, կամ երաշխավորելու համար, որ երեխան շփման ժամանակ հավելյալ հուզական

(Էմոցիոնալ) տրավմայի չի ենթարկվի: Ցավոք, շատ հայ երեխաներ կան, որոնք ապրում են աներևակայելի ու անտանելի բռնության միջավայրում: Մինչև օրս չկա մի հայտնի դեպք, երբ հանձնաժողովները գործել են այսպիսի իրավիճակից երեխային հեռու պահելու և նրա համար անվտանգ միջավայր ապահովելու ուղղությամբ: Հանձնաժողովը չի գործում աշխատանքային ժամերից դուրս, իսկ ոստիկանությունը չի կարող երեխային հեռացնել տնից առանց հանձնաժողովի ներկայացուցչի ներկայության: Միակ ձևը, որ Հայաստանում երեխան կարող է պաշտպանվել երկարատև դատական քննություններն են, որոնք տարիներ են տևում, իսկ այդ ընթացքում երեխան շարունակում է ապրել բարձր ռիսկայնության և վտանգավոր միջավայրում:

Ի վերջո, գոյություն ունի երեխաների հետ աշխատող մասնագետների ընդհանուր տեսակետ, որ կան այնպիսի իրավիճակներ (ինչպես օրինակ՝ ընտանեկան բռնությունը), որոնք մասնավոր, ընտանեկան հարցեր են և պետք չէ միջամտել: Հաճախ երեխաները առաջինը ուսուցիչների հետ են խոսում, երբ տանը վախի մթնոլորտ է տիրում: Սակայն ուսուցիչները շատ հազվադեպ են իմանալուց հետո քայլեր ձեռնարկում: Իրականում ուսուցիչներն ու դպրոցի աշխատակազմը երբեմն կարող են երեխաներին հավելյալ վտանգի ենթարկել՝ բռնարարին հայտնելով երեխայի նոր դպրոցի տեղը, կամ անգամ մոր գտնվելու վայրը:

Կրթության տեսանկյունից՝ Հայաստանում ընտանեկան բռնության մասին օրենքը պահանջում է, որ ուսուցիչները պարբերաբար վերապատրաստվեն՝ ընտանիքում բռնությունը կանխելու ուղղությամբ իրենց դերը իրականացնելու համար. օրենքը նաև պահանջում է, որ դպրոցական ծրագրերում ներառված լինեն բռնության և հասարակության վրա դրա ազդեցության մասին նյութեր: Իրականում այս դրույթները չեն իրականացվում, չկան նաև այս պահանջները իրականացնելու միանիզմներ: Ստամբուլյան կոնվենցիան ընդգրկում է այս ոլորտը. կոնվենցիան ամրագրում է, որ երեխաներին առնչվող ընտանեկան բռնության դեպքերի մասին պետք է հայտնել երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող համապատասխան պետական մարմիններին: Կոնվենցիայի վավերացումը հետաձգելով պահպանվում է ստատուս քվոն, համաձայն որի մասնագետները պարտավորություն չունեն հայտնել դեպքերի մասին և դրանց մասին հազվադեպ են հայտնում:

V. Առաջարկներ



V. Առաջարկներ

Հայաստանում ընտանեկան բռնության տարածվածությունը նվազեցնելով՝ կնվազեն նաև մանուկ հասակում ընտանեկան բռնության միջավայրում ապրելու ռիսկերը: Ուստի, զոհերի և նրանց երեխաների բարեկեցությունն ապահովելու համար, կանանց դեմ ընտանեկան բռնության նվազեցմանն ուղղված գործողությունների լավ մշակված ծրագիր է անհրաժեշտ: Այս ծրագիրն իր մեջ պետք է ներառի նաև երեխաների պաշտպանության լիարժեք գործող համակարգ, ապահովելու համար, որ երբ հնարավոր չէ կանխել բռնությունը, երեխաների անվտանգությանը, առողջությանն ու բարեկեցությանը առաջնահերթություն տրվի: Ընդհանուր ծրագիրը պետք է և՛ կանխարգելող, և՛ արձագանքող (ռեակտիվ) բնույթ ունենա. այն առաջին հերթին պետք է ուղղված լինի կանանց նկատմամբ բռնության դադարեցմանը և պետք է նաև աջակցի բռնության միջավայրում ապրող երեխաներին ու նրանց մայրերին՝ օգնելով նրանց ապաֆինվել, վերականգնվել և սկսել վերադասավորել իրենց կյանքը:

Աշխատության այս բաժնում առաջարկներ են արվում, թե ինչպես պետք է փոխվի ու զարգանա համակարգը Հայաստանում՝ ընտանեկան բռնության միջավայրում ապրող կանանց ու երեխաներին ավելի լավ պաշտպանելու

համար: Առաջարկները արվում են Հայաստանում զոհերի հետ աշխատելու մասնագիտական փորձառության և միջազգային լավագույն փորձի (ներառյալ ընտանեկան բռնության և երեխաների պաշտպանության Մեծ Բրիտանիայի և Շվեդիայի փորձառությունը) հիման վրա:

Կրթություն և իրազեկվածության բարձրացում

1. Ստամբուլյան կոնվենցիայի համաձայն պետք է կատարվեն իրազեկվածության բարձրացմանը միտված աշխատանքներ՝ հայ հասարակությանը ընտանեկան բռնության բացասական հետևանքների և գենդերային հավասարության կարևորության մասին իրազեկելու համար: Լրատվամիջոցներն ու մասնավոր սեկտորը պետք է ներգրավվեն այս աշխատանքներում, որպեսզի հնարավոր լինի ստեղծել մեծ արձագանք ունեցող և նպատակային արշավներ՝ կոտրելու համար վնասակար գենդերային կարծրատիպերը, որոնք դեռ գոյություն ունեն հայկական ընտանիքների մեծ մասում: Այս արշավները պետք է իրականացնի հաղորդակցման ոլորտի մասնագետներից, ՀԿ-ներից, մասնավոր ու պետական սեկտորի ներկայացուցիչներից կազմված միջդիսցիպլինար մի թիմ և հնարավորության դեպքում պետք է ներգրավված լինեն նաև հայտնի մարդիկ:
2. Բոլոր դպրոցներում ուսումնական ծրագրի շրջանակներում պետք է անցկացվեն տարբեր

տարիքային խմբերին համապատասխան սեմինարներ, որոնք խրախուսում են գենդերային հավասարությունն ու առողջ հարաբերությունները: Այս սեմինարները պետք է ուղղված լինեն վնասակար գենդերային հարաբերությունների դեմ պայքարին և պետք է երեխաներին սովորեցնեն տարբերակել ընտանեկան բռնության նախանշանները և թե ինչպես պետք է օգնության դիմել: Ընդհանուր առմամբ սեմինարները պետք է օգնեն երեխաներին զարգացնել հուզական (եմոցիոնալ) գիտակցություն՝ նրանց աջակցելով ճանաչել տարբեր զգացողություններ իրենց ու այլոց մեջ: Սա կօգնի երեխաներին սովորել, թե ինչպես հարաբերություններ կառուցել, կարեկցել, հաղորդակցվել, ինքնակարգավորման և խնդիրներ լուծելու հմտություններ ձեռք բերել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս ծրագրերը երկարաժամկետ դրական արդյունքներ ունեն ընտանեկան բռնության կանխարգելման առումով, քանի որ երեխաները գենդերային հիմքով բռնության և խտրականության մասին ավելի լավ տեղեկացված են դառնում:

3. Հայաստանի բոլոր դպրոցներում պետք է ներդնել վերապատրաստման ծրագրեր՝ ուսուցիչներին և դպրոցի անձնակազմին վերապատրաստելու համար, թե ինչպես հայտնաբերել ընտանեկան բռնության վաղ նշանները և ինչպես արձագանքել կոնֆիդենցիալ և ոչ կոնֆիդենցիալ դեպքերին: Ուսուցիչներին պետք

է վերապատրաստել նաև ուսումնառության մեջ ցուցաբերել «տրավմայի գիտակից» մոտեցում, որպեսզի վարքագծի հետ կապված խնդիրներ ունեցող երեխաները չպիտակավորվեն ու չպատժվեն տարբեր պատժիչ մեթոդներով, այլ նրանց աջակցեն և նրանց ունեցած դժվարությունները դիտարկվեն տանն ունեցած խնդիրների համատեքստում: Այսպիսով ուսուցիչները կարող են փորձել օգնել երեխաներին ինչ-որ չափով հաղթահարել նրանց վրա ընտանեկան բռնության թողած հուզական (եմոցիոնալ) ու վարքագծային բացասական ազդեցության հետևանքները:

4. Դպրոցները պետք է ունենան հոգեբան-խորհրդատուների, խաղային թերապևտների և ուսումնական խորհրդատուների հաստիքներ, որոնք ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաներին աջակցելու հատուկ պատրաստվածություն ունեն: Սա պետք է անել պետության կողմից լրացուցիչ ֆինանսավորման միջոցով: Այսպիսի մասնագետներ ունենալը հնարավորություն կտա, որ երեխաները իրենց ծանոթ միջավայրում, որտեղ նրանք իրենց ապահով են զգում, կարողանան անվճար օգտվել կենսական նշանակություն ունեցող ծառայություններից: Այս տարատեսակ ծառայություններն անհրաժեշտ են, քանի որ բռնության միջավայրում ապրող երեխաները

կարող են տարբեր տեսակի աջակցության կարիքներ ունենալ՝ հուզական (եմոցիոնալ), հոգեբանական, վարքագծային, ուսումնական և սոցիալական, և համապատասխան աջակցությունը պետք է հասանելի լինի:

5. Հայաստանի համալսարաններում սոցիալական աշխատանքի ոլորտը ուսումնասիրող ուսանողների համար պետք է մշակվի ընտանեկան բռնության վերաբերյալ ուսումնական ծրագիր: Ծրագրի մեջ պետք է ընդգրկված լինեն «տրավմայի վրա հիմնված» և «զոհակենտրոն» մոտեցումներ. ծրագիրը պետք է ուսանողներին զինի և՛ զոհերի, և՛ բռնություն կիրառողների հետ աշխատելու համար անհրաժեշտ հմտություններով: Ուսումնական ծրագիրը պետք է շրջանավարտներին զինի նաև ընտանեկան բռնության դեպքերի ռիսկը գնահատելու, ինչպես նաև բռնության միջավայրում ապրող երեխաներին պաշտպանելու համար անհրաժեշտ հմտություններով:
6. Հնարավորության դեպքում Հայաստանի ավելի շատ համալսարաններ պետք է ունենան սոցիալական աշխատանքի ոլորտում կրթական ծրագրեր (նաև մագիստրոսական), որոնց ուսումնական ծրագրերը հիմնված կլինեն լավագույն միջազգային փորձի և ժամանակակից հետազոտությունների վրա: Պետությունը պետք է համապատասխան ուսումնական ծրագրեր մշակի համալսարաններում

սոցիալական աշխատանքի ոլորտի դասընթացների համար, որոնք պետք է ուղեկցվեն 1-2 տարի տևողությամբ գործնական աշխատանքով՝ փորձառու սոցիալական աշխատողի ղեկավարության ներքո:

Երեխաների պաշտպանություն և սոցիալական ծառայություններ

1. Որպես առաջնային խնդիր՝ Հայաստանը պետք է ստեղծի երեխաների պաշտպանության գործող ծառայություն: Այս ծառայությունը պետք է փոխարինի ներկայիս Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժիններին ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին: Նոր ծառայության աշխատակիցները պետք է լինեն ոչ թե կամավորներ, այլ վարձատրվող, հատուկ պատրաստվածություն ունեցող սոցիալական աշխատողներ: Պետության կողմից պետք է մշակվեն մեխանիզմներ, ընթացակարգեր, ուղեցույցներ և օրենսդրություն՝ ապահովելու համար երկրի ողջ տարածքում սոցիալական աշխատանքի միատարրությունը: Սոցիալական աշխատողները, իրենց աշխատանքն արդյունավետ կատարելու համար, պետք է ուղղորդվեն այս օրենսդրությամբ և գործունեության վերաբերյալ ուղեցույցներով: Հայաստանի յուրաքանչյուր քաղաքում պետք է լինեն սոցիալական աշխատողների խմբեր՝ կարիք ունեցող

բոլոր երեխաներին պաշտպանություն և աջակցություն և ապահովելու համար:

2. Յուրաքանչյուր մասնագետ, ով մտահոգված է, որ երեխան բռնության միջավայրում է ապրում, պետք է հայտնի սրա մասին երեխաների պաշտպանության ծառայությանը. սա պետք է օրենքով պարտադրված լինի: Հայտը ստանալուն պես երեխաների պաշտպանության ծառայությունը պետք է անմիջապես սկսի իրավիճակի գնահատում և սահմանված ժամկետներում եզրակացություն տա:
3. Ընտանեկան բռնության դեպքերը հետազոտող սոցիալական աշխատողները պետք է ռիսկերի ստանդարտացված գնահատում իրականացնեն, որտեղ հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ՝ բռնության բնույթը, չափը, նախապատմությունը և տուժողի ու երեխաների վրա դրա ազդեցությունը: Պետք է առանձին գրույցներ ունենալ տուժողի և բռնարարի հետ, ինչպես նաև պետք է առանձին խոսել երեխաների հետ՝ նրանց զգացողություններն ու ցանկությունները հասկանալու համար: Ռիսկերի գնահատման ընթացքում սոցիալական աշխատողը պետք է ընտանիքի հետ անվտանգության պլան մշակի, հետագայում բռնության մեկ այլ միջադեպի հավանականության նկատառումներից ելնելով:
4. Գնահատումից հետո սոցիալական աշխատողները պետք է որոշեն, թե աջակցության ինչ փաթեթ պետք է

առաջարկեն ընտանիքին: Անհրաժեշտության դեպքում պետք է ուղղորդել նրանց համայնքային ծրագրեր: Համայնքային ծրագրերն ու ՀԿ-ները (ինչպես օրինակ՝ Կանանց աջակցման կենտրոնը) կարող են կանանց ու նրանց երեխաներին հոգեբանական աջակցություն տրամադրել, որպեսզի օգնեն նրանց «մարսել» իրավիճակն ու հաղթահարել ապրումները: Նաև կարևոր է ծնողներին (և՛ բռնարարներին, և՛ զոհերին) երեխաների դաստիարակության ու ծնող լինելու դասընթացներ առաջարկել, որոնք կօգնեն նրանց իմանալ, թե ընտանեկան բռնությունը ինչ ազդեցություն ունի երեխաների վրա:

5. Այն դեպքերում, երբ երեխայի համար տանը ապրել շարունակելու ռիսկը չափազանց զգալի է համարվում, սոցիալական աշխատողը պետք է դիմի դատարան՝ երեխային տնից հեռացնելու պահանջով: Սա պետք է տեղի ունենա միայն այն դեպքերում, երբ երեխան անմիջական վտանգի սպառնալիքի տակ է, կամ երբ զոհն ու բռնարարը հրաժարվում են աջակցման ծառայություններից, և անվտանգության բոլոր այլ տարբերակները դիտարկվել են: Եթե որոշվում է, որ երեխային տնից հեռացնելը անհրաժեշտ է, երեխային պետք է տեղավորել ընտանիքի այլ անդամների կամ ընկերների մոտ, կամ խնամակալ ընտանիքի խնամակալությանը հանձնել: Դրանից բացի անհրաժեշտ է իրականացնել խնամակալ ընտանիքի՝

փաստերով հիմնավորված գնահատում, որպեսզի երաշխավորված լինի, որ երեխայի նոր միջավայրը հոգատար է, ջերմ ու ապահով:

6. Պետք է ստեղծվեն տեսակցությունների չեզոք կետրոններ՝ երեխաների և հայրերի (բռնություն կատարողների) շփումը վերահսկելու համար: Այս կետրոնները պետք է ապահովեն, որ երեխաները տեսակցության ժամանակ հետագա հուզական (Էմոցիոնալ) ցնցումների չենթարկվեն և որ նրանց չօգտագործեն որպես գործիք՝ զոհերի հանդեպ հետագա բռնություն կիրառելու համար: Կետրոնները պետք է ապահովեն նաև, որ տեսակցությունների ժամանակ զոհը չառերեսվի բռնարարի հետ:

Աջակցություն զոհերին

1. Մասնագետները, որոնք կասկածներ ունեն, որ կինը ընտանեկան բռնության զոհ է, պետք է փորձեն առանձին խոսել զոհի հետ իրավիճակի մասին: Հնարավորության դեպքում մասնագետը պետք է խրախուսի, որ զոհը դիմի համապատասխան ՅԿ-ների՝ աջակցություն ստանալու համար: ՅԿ-ների հետ չի կարող կապ հաստատվել առանց զոհի համաձայնության: Միակ բացառությունն այն դեպքերը կարող են լինել, երբ խոսքը երեխայի մասին է: Այդպիսի դեպքերում պետք է դիմել երեխաների պաշտպանության ծառայություններին՝ անկախ համաձայնությունից:

2. Ընտանեկան բռնության զոհերի աջակցությունը պետք է լինի ՅԿ-ներին ենթակա աջակցման կետրոնների կողմից: 2019 թ. Կանանց աջակցման կետրոնը, կառավարության հետ ունեցած համաձայնագրի շրջանակներում, վերապատրաստել է 8 ՅԿ-ների: Այժմ այս կետրոնները կարող են փոխարինել ընտանեկան բռնության զոհերին պետության կողմից առաջարկվող սոցիալական աջակցության ծառայություններին: Այս նոր կետրոնների մասնագետները այժմ կարող են կանանց՝ իրենց ու իրենց երեխաներին անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև ժամանակավոր կացարան տրամադրել: Անհրաժեշտ է հետագայում ստեղծել ավելի շատ աջակցման կետրոններ և պատրաստել ավելի շատ մասնագետներ՝ աջակցման ծառայությունների պահանջարկը բավարարելու համար: Այս կետրոնները պետք է լինեն զոհակետրոն և պետք է առաջնորդվեն միջազգային լավագույն փորձով:
3. ՅԿ-ների ապաստանների տեղակայման վայրը պետք է գաղտնի լինի, և դրանք պետք է տրամադրեն համապարփակ ծառայություններ, որոնք ուղղված են թե՛ մոր, թե՛ երեխայի կարիքներին: Երեխաներին պետք է ապահովել կանոնակարգված առօրյա զբաղմունքներ, խաղային և արտ-թերապիա, անհատական հոգեբանական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն, ծնող-երեխա թերապիա

և հնարավորության դեպքում՝ ինտեգրում դպրոցական համակարգում: Հաստատվել է, որ այս ամենն արդյունավետ է ընտանեկան բռնության բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Երեխաներն անուղղակիորեն շահում են նաև մայրերի համար առաջարկվող ծրագրերից, որոնք նպաստում են ծնող-երեխա առողջ հարաբերությունների ամրապնդմանը: Այս ծառայությունները ներառում են երեխաների խնամք, հոգեբանական խորհրդատվություն, մասնագիտական վերապատրաստում, ծնող լինելու դասընթացներ, առողջապահության համակարգից օգտվելու աջակցություն, իրավաբանական աջակցություն, ինչպես նաև զոհերի աջակցման խմբերի միջոցով ընտանեկան բռնության մասին իրազեկվածություն և երկարաժամկետ կացարանի ապահովում: Չնայած Կանանց աջակցման կենտրոնը Հայաստանում այս տեսակի ծրագիր իրականացնելու հիանալի օրինակ է, առկա ծավալներով աշխատանքը կազմակերպելու համար ավելի շատ նմանատիպ ապաստաններ են անհրաժեշտ:

4. Անհապաղ պետք է ստեղծել ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային թեժ գիծ: Թեժ գծի աշխատակազմը պետք է ունենա ընտանեկան բռնության զոհերի աջակցման ամբողջական պատրաստվածություն: Անձնակազմը պետք է կարողանա գնահատել ռիսկը զոհի ու երեխաների համար և պետք է ունակ

լինի անհրաժեշտության դեպքում քննարկել անվտանգությունը և պլանավորել իրավիճակից ելքը:

5. Համապատասխան նախարարությունների կողմից պետք է մշակվեն նոր մեխանիզմներ, ապահովելու համար, որ բռնության զոհերը բռնարարից հեռանալուց հետո կարողանան օգտվել պետական նպաստներից: Այսպիսով երաշխավորվում է, որ բաժանվելուց հետո զոհը կարող է ֆինանսական աջակցություն ստանալ իր և իր երեխաների համար: Սա կօգնի կանխել, որ զոհը, ֆինանսական ապահովության համար, վերադառնա բռնության միջավայր:
6. Անհրաժեշտ է վերանայել և փոփոխել ընտանեկան բռնության միջադեպից հետո ֆինանսական փոխհատուցման դիմելու համակարգը: Փոխհատուցման դիմելու գործընթացը պետք է բարելավվի՝ այն ավելի պարզ դարձնելով, որպեսզի զոհը կարողանա հեշտ կողմնորոշվել: Սխեման պետք է ներառի բոլոր զոհերին՝ անկախ ֆինանսական կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակից: Դիմումի հետ պետք է ներկայացվեն նաև սոցիալական աշխատողի կամ դեպքը վարողի կողմից տրամադրված տեղեկանքներ:

Օրենսդրական բարեփոխումներ

1. Ընտանեկան բռնությունը պետք է ամբողջությամբ քրեականացվի Չայաստանի քրեական օրենսգրքով, և տնտեսական և հոգեբանական բռնության համար պետք է կիրառվեն քրեական պատժամիջոցներ: Լրացուցիչ քրեական պատժամիջոցներ պետք է սահմանվեն գենդերային հիմքի վրա կատարված հանցագործությունների, զենքի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կատարված հանցագործությունների, երեխայի ներկայությամբ կատարված հանցագործությունների և նախկին կամ ներկայիս ամուսնու/կնոջ նկատմամբ կատարված հանցագործությունների համար:
2. 2018 թ. օրենսդրությունից պետք է անհապաղ հանել 105-րդ հոդվածը: Սա կնշանակի, որ բռնարարների գործողությունները չեն կարող մեղմացվել զոհի գործողություններով պայմանավորված, և այդպիսով բռնարարները պետք է լիարժեք պատասխանատվության ենթարկվեն: Օրենսդրության մեջ «ընտանիքի համերաշխությունը վերականգնելու» մասին բոլոր հղումները նույնպես պետք է հեռացվեն:
3. Պետք է ստեղծել տվյալների ազգային շտեմարան, որտեղ օրենքով պահանջվում է, որ ոստիկանության աշխատակիցները պաշտոնապես գրանցեն գենդերային հիմքով բռնություն կատարողներին: Ընտանեկան բռնության մասին օրենքի մեջ պետք է

փոփոխություններ լինեն՝ ապահովելու համար, որ ոչ մի բռնարարի անուն երբեք չի կարող հանվել այս ցուցակից: Պետք է դիտարկել այնպիսի օրենք ստեղծելու հնարավորությունը, որի համաձայն դիմում ներկայացնողները կարող են ստուգել, թե արդյոք իրենց զուգընկերը երբևէ նախկին հարաբերությունների ժամանակ բռնություն կիրառել է, թե ոչ:

4. Օրենքի մեջ պետք է մտցնել փոփոխություններ՝ ապահովելու համար, որ բռնության զոհերը ոստիկանական բաժանմունք այցելի ժամանակ չառերեսվեն բռնարարներին: Չարցաքննությունները պետք է անցկացվեն առանձին սենյակներում, որպեսզի զոհն ու բռնարարը միմյանց չտեսնեն և տեղյակ չլինեն միմյանց ներկայության մասին:
5. Ընտանեկան բռնության մասին օրենքը պետք է փոփոխվի այնպես, որ պաշտպանության կարգադրությունները տրվեն 24 ժամվա ընթացքում անկախ այն բանից, թե նախկինում անհետաձգելի միջամտության որոշում եղել է, թե ոչ:
6. Օրենքը պետք է փոխվի այնպես, որ խիստ բարձր ռիսկայնությամբ և կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում հնարավոր լինի երեխաներին անմիջապես ժամանակավորապես հեռացնել ընտանիքից: Սա կարող է տեղի ունենալ առանց երեխայի պաշտպանության ծառայությունների

ներկայացուցչի ներկայության: Երեխային ընտանիքից հեռացնելուց հետո, պետք է դիմել երեխայի պաշտպանության ծառայություններին, իսկ սոցիալական աշխատողները պետք է դիտարկեն դատարանին դիմելու հնարավորությունները՝ երեխայի հետ կապված հետագա քայլերը որոշելու համար, ինչպես նաև որոշելու համար, թե արդյոք երեխայի համար անվտանգ է տուն վերադառնալը:

7. Ընտանեկան բռնության մասին օրենքը պետք է փոխվի այնպես, որ արգելվի երեխաներից բազմակի ցուցմունքներ վերցնելը: Երեխաները պետք է ցուցմունք տան միայն իրենց համաձայնությամբ, և դա չպետք է լինի դատարանի դահլիճում: Երեխաները պետք է վկայություն տան մեկ անգամ, և նրանց պետք է հարցաքննի հատուկ պատրաստվածություն ունեցող մասնագետ-քննիչը, որը ծանոթ է այնպիսի մեթոդների, ինչպես օրինակ՝ «Լավագույն ապացույցներ ի հայտ բերելու» մեթոդը (https://www.cps.gov.uk/sites/default/files/documents/legal_guidance/best_evidence_in_criminal_proceedings.pdf):
8. Դատական համակարգի ծառայողները պետք է հնարավորություն ունենան շարունակել բռնարարի քրեական հետապնդումը, եթե դա բխում է հասարակության շահերից, անգամ եթե զոհը որոշում է կարճել գործը: Սա օգնում է բռնարարներին պատասխանատվության ենթարկել անգամ այն

իրավիճակներում, երբ զոհը չափազանց ընկճված է, կամ վախենում է գործ հարուցել: Օրենքը պետք է հստակ սահմանի, թե որ դեպքերում սա պետք է տեղի ունենա, պետք է հաշվի առնի ձեռք բերված ապացույցների չափը և հանցանքի լրջությունը:

Արագ արձագանքման ծառայություններ

1. Ոստիկանության աշխատակիցները պետք է անցնեն ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության վերաբերյալ պարտադիր խորացված վերապատրաստում: Այս վերապատրաստման շրջանակներում պետք է սովորեն, թե ինչպես ճանաչել ընտանեկան բռնության նախանշանները և ինչպես նրբանկատ ու պատշաճ կերպով արձագանքել զոհերին: Ոստիկանության աշխատակիցները պետք է իմանան տրավմայի և զոհերի ու երեխաների վրա դրա ազդեցության մասին: Այս դասընթացի շրջանակներում պետք է նաև սովորեն ինչպես հայտնաբերել ընտանեկան բռնության զոհերին, ինչպես հասկանալ կանանց դեմ բռնության բնույթն ու դինամիկան:
2. Ոստիկանության աշխատակիցները պետք է սովորեն, թե ինչպես կարելի է գործընթացի մեջ ներգրավել երեխաներին, որ համապատասխան լինի նրանց տարիքին և երեխան դիտարկվի որպես իրավունքներ ունեցող անհատ: Ոստիկանության

աշխատակիցները կանչի ժամանակ պետք է խոսեն երեխաների հետ, որպեսզի նրանց հանգստացնեն ու սփոփեն, նաև հասկանան նրանց ցանկություններն ու զգացողությունները:

3. Ոստիկանության աշխատակիցները պետք է ռիսկերի մանրամասն գնահատման պատրաստվածություն ունենան: Այս գնահատման շրջանակներում նրանք պետք է առանձին զրույցներ ունենան զոհի, բռնարարի և երեխաների հետ: Ոստիկանության կողմից ներկայումս կատարվող ռիսկերի գնահատումը պետք է փոփոխվի այնպես, որ լիարժեք գնահատվի զոհի համար գոյություն ունեցող վտանգը: Ոստիկանությունը պետք է զոհին հստակ բացատրի, թե ինչ նպատակ ունի վտանգի գնահատումը և այնպես անի, որ զոհը հասկանա, թե իրենից ինչ է պահանջվում:
4. Ոստիկանները պետք է ձերբակալեն բռնարարին, եթե համարում են, որ զոհն ու երեխաները վտանգված են, եթե բռնարարը մնա տանը: Բռնարարին չպետք է նախազգուշացումներ տալ, քանի որ դրանք արդյունավետ չեն:
5. Ոստիկանները պետք է գործեն միջադեպի բնույթին համապատասխան, և անհետաձգելի միջամտության որոշման միջոցով զոհն ու երեխաները պետք է անմիջապես պաշտպանություն ունենան: Անհետաձգելի միջամտության որոշումը պետք է տրվի

առնվազն 20 օրով, որպեսզի զոհերը ժամանակ ունենան պատրաստվել և պլանավորել իրենց անվտանգությունը: Անհետաձգելի միջամտության որոշումը կայացնելուց անմիջապես հետո այն պետք է հասանելի լինի զոհին՝ առանց վերջինիս ոստիկանության բաժանմունք ներկայանալու պարտադրանքի: Այն դեպքում, երբ պարտադիր է զոհի ներկայանալը, նրան պետք է հարցաքննեն բռնարարից առանձին, և նրա անվտանգությունը պետք է մշտապես ապահովված լինի:

6. Ոստիկանությունը պետք է վերահսկի անհետաձգելի միջամտության որոշման պահանջների կատարումը և խստորեն պատժի դրա խախտումը՝ ապահովելով զոհի ու երեխաների անվտանգությունը:
7. Ոստիկանները պետք է դադարեն միջնորդի դեր կատարելու փորձերը և չխրախուսեն զոհին հանուն «ընտանեկան արժեքների» մնալ բռնարարի հետ: Սա նրանց լիազորությունների շրջանակներում չէ և ոչ էթիկական է:
8. Ոստիկանները պետք է գնահատեն զոհի ստացած վնասվածքների ծանրության աստիճանը, պետք է փաստաթղթավորեն դրանք և լուսանկարեն ապացույցները: Առաջին կանչի ժամանակ պետք է վկաներ գտնել, և բոլոր վկայությունները պետք է ամբողջությամբ ու ճշգրիտ կերպով արձանագրվեն:

9. Ոստիկանության աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, թե զոհերի ու նրանց երեխաների համար ինչ ծառայություններ գոյություն ունեն: Գոյություն ունեցող բոլոր տարբերակների մասին իրազեկված լինելը ոստիկանության աշխատակիցներին հնարավորություն է տալիս զոհերին ճիշտ ուղղորդել և ժամանակին տեղեկացնել համապատասխան կազմակերպություններին: Ընտանեկան բռնության հարցերով զբաղվող ՅԿ-ներին կարելի է դիմել միայն զոհի համաձայնությամբ: Համաձայնության դեպքում պետք է անմիջապես դիմում-հայտ ներկայացնել համապատասխան կազմակերպություններին և ներառել զոհի կոնտակտային տվյալները: Այն դեպքում, երբ խոսքը գնում է երեխայի մասին, պետք է տեղեկացնել երեխաների պաշտպանության ծառայություններին՝ անկախ համաձայնությունից:
10. Պետք է ստեղծել անկախ կարգավորող մարմին՝ ստուգելու համար, թե արդյոք ոստիկանության աշխատակիցները պատշաճ կերպով են արձագանքում ընտանեկան բռնությանը: Այն դեպքում, երբ ոստիկանության աշխատակիցները խախտում են օրենսդրությունն ու ցուցումները, պետք է կարգապահական միջոցներ ձեռնարկել:
11. Դատական համակարգի ծառայողները պետք է ծանոթ լինեն տրավմայի դինամիկային և իմանան ինչպես լավագույնս աջակցել զոհերին: Նրանք

պետք է նրբանկատ լինեն զոհերի կարիքների հանդեպ և հարցաքննություններն անցկացնեն զոհերի նախընտրած վայրում: Վերապատրասման դասընթացների ժամանակ պետք է ընդգծել անկողմնակալ հետաքննությունների կարևորությունը, որպեսզի քննիչները թույլ չտան, որ իրենց տեսակետները ազդեն կայացվող որոշումների վրա: Սա ապահովելու համար քննիչների որոշումներ կայացնելու գործընթացը պետք է վերահսկվի կարգավորող մարմնի կողմից:

12. Ոստիկանության աշխատակիցներն ու դատական համակարգի ծառայողները պետք է մշտապես պահպանեն զոհերի մասին տեղեկությունների գաղտնիությունը: Նրանք չեն կարող զոհերի մասին տեղեկություններ հաղորդել բռնարարին, և գաղտնիության որևէ խախտմանը պետք է շատ լուրջ վերաբերվել: Արագ արձագանքման ծառայությունների շրջանակներում պետք է «ազդարարելու» մշակույթ ձևավորել, որպեսզի ոստիկանության աշխատակիցներն ու դատական համակարգի ծառայողները, եթե նկատում են, որ իրենց գործընկերները խախտում են օրենքը, կարգավորող մարմիններին տեղեկացնեն դրա մասին:
13. Չոհերի բժշկական հետազոտությունները պետք է շատ նրբանկատ կերպով արվեն. բժիշկները պետք է ունենան ընտանեկան բռնության զոհերի հետ

աշխատելու հատուկ պատրաստվածություն:
Չոհերը պետք է կին բժիշկների մոտ հետազոտվելու
ընտրության հնարավորություն ունենան:

Դատական համակարգ

1. Եթե երկարաժամկետ պաշտպանության կարիք
կա, զոհերը պաշտպանության կարգադրություն
ստանալու համար դատարան դիմելու աջակցություն
պետք է ստանան: ՀԿ-ները կարող են աջակցել
զոհերին դիմում ներկայացնելու հարցում:
Պաշտպանության կարգադրությունները պետք է
տրվեն դիմելուց 24 ժամվա ընթացքում, որպեսզի
զոհն ու երեխաները լիովին պաշտպանված
լինեն: Այս կարգադրությունները պետք է տրվեն
անկախ այն բանից, թե նախկինում անհետաձգելի
միջամտության որոշում կայացվել է, թե ոչ: Այն
կանանց, որոնք վախենում են իրենց կյանքի,
ընտանիքի ու երեխաների անվտանգության համար,
պետք է առաջարկել ցմահ պաշտպանության
կարգադրություններ:
2. Դատական համակարգի ծառայողները պետք է
համապարփակ մասնագիտացված դասընթացներ
անցնեն, որոնք կօգնեն նրանց ավելի իրազեկված
լինել ընտանեկան և գենդերային հիմքով բռնու-
թյան մասին: Սա կօգնի, որ նրանք դատական
գործընթացների ընթացքում ավելի շատ աջակցեն

զոհերին և հավանաբար կխրախուսի, որ ավելի
շատ թվով զոհեր դատական գործընթացը հասցնեն
ավարտին:


3. Չոհերը պետք է պարտադրված չլինեն վճարել
դատարան դիմելու համար նախատեսված պետական
տուրքը: Դատարան դիմելու համար (պաշտպանության
կարգադրությունների կամ ընտանեկան բռնության
օրենքով սահմանված կարգով բռնարարին պատժելու
համար) նախատեսված վճարը բավականին զգալի
խոչընդոտող գործոն է, որ զոհը փորձի հասնել
արդարության, և այն պետք է վերացնել:
4. Դատարանը պետք է թույլ տա մասնագետներին,
ինչպես օրինակ սոցիալական աշխատողներին և
հոգեբաններին, վկայություն տալ կամ զեկույցներ
պատրաստել, այդ թվում պաշտպանության
կարգադրությունների համար դիմելու և
խնամակալության վերաբերյալ գործերի ժամանակ:
Աջակցման կենտրոններին պետք է թույլատրել
մասնակցել դատական գործընթացին՝ զոհերին
աջակցելու և արդար դատաքննության նրանց
իրավունքն ապահովելու համար:
5. Ընտանեկան բռնության գործերի քննությունը պետք
է վարեն ընտանեկան բռնության հարցերով հատուկ
պատրաստվածություն ունեցող դատավորները:
Այս դատավորները պետք է խորապես հասկանան
կանանց ու երեխաների վրա ընտանեկան բռնության

ազդեցությունը, որպեսզի հիմնավորված որոշում կայացնեն: Նրանք այս հարցերի նկատմամբ չպետք է սուբյեկտիվ մոտեցում ունենան, և նրանց որոշումների մեջ չպետք է նշմարվեն գեղեցիկության կարծրատիպեր: Վերապատրաստման դասընթացների շրջանակներում պետք է անդրադառնալ այս հարցերին:

6. Դատական նիստերը պետք է հստակ ժամանակացույց ունենան՝ ապահովելու համար, որ երեխաները հարկադրված չլինեն երկար ժամանակ մնալ վտանգավոր իրավիճակներում: Բռնարարի գործով դատական նիստերը նույնպես պետք է երկար չտևեն, որպեսզի զոհերը կարողանան փակել այդ էջը, սկսեն ապաքինվել ու շարունակեն իրենց կյանքը:
7. Դատավորները պետք է երաշխավորեն, որ բռնարարի՝ տեսակցության կամ ինսամակալության իրավունքները չեն սպառնում զոհերի կամ երեխաների անվտանգությանը և չեն ոտնահարում նրանց իրավունքները: Ինսամակալության վերաբերյալ որոշումները չպետք է հիմնված լինեն այն հանգամանքի վրա, թե որ կողմն է նյութապես ավելի ապահովված. պետք է հաշվի առնել, թե ով կարող է ավելի լավ ինսամել երեխային և հոգալ նրա կարիքները: Դատավորը պետք է շփումը վերահսկելու կարգադրություն անի այն դեպքերում, երբ համարվում է, որ բռնարարի ու երեխայի առանձին հանդիպումը չափազանց ռիսկային է:

8. Անհրաժեշտ է մշակել համակարգ, ըստ որի երեխային դատարանի կողմից պետք է տրամադրել «ինսամակալ», որը ողջ դատաքննության ընթացում կպաշտպանի երեխայի շահերը: Անհրաժեշտության դեպքում դա կարող է լինել աջակցման կենտրոնի կամ ՀԿ-ի ներկայացուցիչ:

VI. Եզրակացություն




VI. Եզրակացություն

Ընտանեկան բռնությունը հանրային առողջապահության հիմնախնդիրներից է, որը սպառնալիք է ներկայացնում ամբողջ աշխարհում միլիոնավոր կանանց ու երեխաների ֆիզիկական, հոգեբանական և վարքագծային առողջությանը: Կանանց ու երեխաների առողջության համար ընտանեկան բռնության բացասական հետևանքները արտացոլվում են սերունդների վրա և խոչընդոտում երկրների սոցիալական ու տնտեսական զարգացմանը: Հայաստանը բացառություն չէ. չնայած, որ վերջին շրջանում ընտանեկան բռնության զրոյացում կանանց պաշտպանելու մղում է նկատվում, երեխաները շարունակում են մնալ որպես անտեսված, երկրորդական զրոյացված և անպաշտպան բնակչության բարձր մասում: Ներկայիս ու ապագա բնակչության բարձրությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանը ընտանեկան բռնության մասին կրթելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելուն զուգահեռ համապարփակ սոցիալական ծառայությունների համակարգ ներդնի՝ երեխաների վրա ընտանեկան բռնության ուղղակի և անուղղակի կործանարար ազդեցության հետևանքները կանխարգելելու ու մեղմելու համար:

Ընտանեկան բռնությունը կատարվում է մի իրականությունում, որտեղ տարբեր գործոններ թույլ

են տալիս, նպաստում և աջակցում են կանանց դեմ բռնությունը: Սա նշանակում է, որ անհատական դեպքերի վրա կենտրոնանալու փոխարեն, մենք պետք է ձգտենք հասկանալ, վերանայել ու փոխել համակարգը: Այս տեսանկյունից Հայաստանը պետք է մշակի ընտանեկան բռնությանն արձագանքելու բավաստեկտոր, համակարգված մոտեցում, որով կապահովվի, որ երեխաների կարիքներին տրվի լիակատար առաջնահերթություն: Արձագանքման այս մոտեցումը պահանջում է, որ պետական մարմինները կատարեն օրենսդրական փոփոխություններ և կազմակերպեն համապատասխան վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև ներդնեն համայնքային ծառայություններ և միջոցառումներ իրականացնելու: Հայաստանը դեռևս չունի բավաստեկտոր և կոորդինացված համակարգ. ուստի, Հայաստանը պետք է սկսի բարելավել համակարգի բոլոր մասերը վերը ներկայացված ,Առաջարկներե բաժնի դրույթների համաձայն: Այնուհետև պետք է վերանայել ընդհանուր համակարգն ու դրա գործունեությունը:

Գրականության
ցանկ


Գրականության ցանկ

1. Swanston, J., Bowyer, L. and Vetere, A. (2014), 'Towards a richer understanding of school-age children's experiences of domestic violence: The voices of children and their mothers', *Clinical Child Psychology and Psychiatry*, vol. 19 no. 2, pp. 184–201
UNICEF (2006), *Behind Closed Doors – The impact of domestic violence on children*, New York: UNICEF
2. British Medical Association (2007), *Domestic Abuse – A report from the BMA Board of Science*, London: BMA.
3. World Health Organization, 'World Report on Violence and Health', ed. By Krug, Etienne G., et al., Geneva, 2002
4. United Nations Population Fund, 'State of the World's Population', New York, 2000
5. Ellsberg, M. and Heise, L. 'Researching Violence against Women. A Practical Guide for Researchers and Activists'. Washington DC, United States: World Health Organization, PATH, 2005
6. Vladimir Osipov, Jina Sargizova "Men and gender equality in Armenia: Report on sociological survey findings," UNFPA, Yerevan, 2016, <http://docplayer.net/57828657-Men-and-gender-equality-in-armenia-report-on-sociologicalsurvey-findings.html>.

7. Fuqin Liu, Judith Mcfarlane, John Maddoux, Sandra Cesario, Heidi Gilroy, Angeles Nava, “Perceived Fertility Control and Pregnancy Outcomes Among Abused Women,” *Journal of Obstetric, Gynecologic & Neonatal Nursing*, 2016, 45(4): 592-600.
8. Matthew Garabedian, Kristine Lain, Wendy Hansen, Lisandra Garcia, Ann Coker, Leslie Crofford, “Intimate Partner Violence and Postpartum Depression,” *American Journal of Obstetrics and Gynecology*, 2008, 199(6): S66.
9. NSPCC report on children with disabilities <https://www.nspcc.org.uk/globalassets/documents/research-reports/right-safe-disabled-children-abuse-report.pdf>
10. Coalitions to Stop Violence against Women, 2016 https://www.womensupportcenter.org/assets/PDF%20publications/Femicide_Report_ENG.pdf
11. Barter C, McCarry M, Berridge D and Evans K (2009) *Partner Exploitation and Violence in Teenage Intimate Relationships*. London: NSPCC / Bristol: University of Bristol School of Policy Studies. Available online at www.nspcc.org.uk/Inform/research/findings/partner_exploitation_and_violence_report_wdf70129.pdf
12. Collin-Vézina D, Hébert M, Manseau H, Blais M and Fernet M (2006) ‘Self-Concept and Dating Violence in 220 Adolescent Girls in the Child Protective System’ *Child and Youth Care Forum* 35 (4) 319-326.
13. Organization for Security and Co-operation in Europe, 2011. *Domestic Violence Survey in the Republic of Armenia*. Retrieved from <http://www.osce.org/yerevan/88229?download=true>.
14. Perry, B.D. ‘The neurodevelopmental impact of violence in childhood’, Chapter 18 in: *Textbook of Child and Adolescent Forensic Psychiatry*, (Eds., D. Schetky and E.P. Benedek) American Psychiatric Press, Inc., Washington, D.C. pp. 221-238, 2001
15. Baldry, A.C., ‘Bullying in Schools and Exposure to DV’, *Child Abuse and Neglect*, vol. 27, no. 7, 2003, pp. 713-732.
16. Furnivall, Judy et al (2012) *Attachment Matters For All – An Attachment Mapping Exercise for Children’s Services in Scotland*, Centre for Excellence for Looked After Children in Scotland, p10
17. Prior, V & Glaser, D 2006, *Understanding attachment and attachment disorders: theory, evidence and practice*, Jessica Kingsley Publishers, London, UK
18. Humphreys, CF 2007b, “‘Talking to my mum’: Strengthening relationships between mothers and children in the aftermath of family violence’, *Social Work Now*, issue 37, pp. 9-11.
19. Liotti, G 2005, ‘Attachment and metacognition in borderline patients’, *Psychomedia*, pp. 1-15.

20. <http://www.menoresyviolenciadegenero.es/documentos/estudios-sobre-menores-expuestos-a-violencia-de-genero/Children-Experiencing-Domestic-Violence-A-Research-Review.pdf>
21. Chapter 26, in: S. Tyano, M. Keren, H. Herrman & J. Cox. (Eds.). Parenthood and Mental
22. Health, 2010. Chichester, UK: John Wylie & Sons. ISBN 978-0-470-74722-3
23. Herman, Judith, M.D. 1997, “Trauma and Recovery”, Basic Books, NY
24. Police Response to Violence against Women and Domestic Violence in Armenia, Council of Europe, 2018 <https://womensupportcenter.org/assets/PDF%20publications/EUR%20ENG%20FINAL.pdf>
25. Preliminary Assessments Regarding Domestic Violence in Swedish Child Protection Services, 2020 <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/2156857X.2018.1526105>
26. Impact of Domestic Violence on Women sexual and Reproductive Health, Women’s Support Center, 2017 <https://womensupportcenter.org/assets/PDF%20publications/Woman%20must%20satisfy.pdf>
27. Sex Imbalances at Birth in Armenia, UNFPA Armenia, 2013 <https://eeca.unfpa.org/en/publications/sex-imbalances-birth-armenia#:~:text=Armenia%2C%20the%20focus%20of%20this>

Գրառումների համար





wsc.armenia@gmail.com
www.womensupportcenter.org
 WomensSupportCenter

Թեժ գիծ՝
099-887-808